

891.715

5-22

891.715
U-22

Գ. Ն. ՄԱՍԻՆ-ՍԻԲԻՐՅԱԿ

30 MAY 2011

95

1357-37

891.715 Վաճառքի Արժեք-
U-22 լույս
ժամկետ պայմանագրեր

14 28/12-29

ԸՆՏԻՐ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Կենսագրական տվյալներ
Կ. ԲՈԳՈՂՅԱՆԻՆԻՆ

Նկարագրող
ԴԱՎԻԴՈՎԻ, ՅԵՎՍԻՆԻ, ՅԵՎ. ՈՒԶԿԻՆԻ

Շ ա պ ի կ ը
Վ. ԶԵԼՅՈՒՆՅԱՆՈՎԱՅԻ

ՊԵՏՅՐԱՏ

1935

ՅԵՐԵՎԱՆ

24.06.2013

3962

ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԻ ՅԵՐԵՎԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատ. խմբագիր՝ Ա. Հայրյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Դասպարյան
Թարգմանիչ՝ Նիկ. Թումանյան
Սրբագրիչ՝ Հ. Դուրյանյան



1357
37



Գլավիտ 264, պատվեր 224, հրատարակչ. 3265, տիրաժ 5000

Պետհրատի տպարան—Յերևան, 11 Գինուհի, 4



Դ. Ն. ՄԱՄԻՆ-ՍԻՐԻՐՅԱՆ (1852—1912)

Դմիտրի Նարկիսովիչ Մամինը ծնվել է 1852 թվին քահանայի ընտանիքում, ձորտատիրական դաժան բեժիմի վերջին տարիներում։ Նրա հալընիքը Ուրալյան լեռների հեռավոր խորքերում կորած փոքրիկ Վիսիմո-Շայտանսկի գործարանն է։

Տասնեչորս տարեկան հասակում Մամինը թողեց հայրական տունը։ Սկզբում սովորում էր Յեկատերինբուրգում, Պերմում, հետո Պետերբուրգի համալսարանում, բայց նա իր ուսումը չվերջացրեց, այլ վերադարձավ հայրենիք և սկսեց ապրել մասնավոր դասերով։

«Յես մանկությունից հրացանը ձեռքիս թափառում եյի տափաստանում և անտառում,—ասում էր Մամինը,—և միայն մի տասնյակ գիշեր չի, վոր անց եմ կացրել վորսորդական գիշերութում, բաց յերկնքի տակ»։

1882 թվին մամուլում լույս տեսան նրա առաջին պատմվածքները՝ Մամին-Սիրիրյակ ազգանվան տակ։ Այդ պատմվածքներում նա նկարագրում էր իր վորսորդական հանդիպումները մասին խուլ տալգաներում ձգած մարդկանց կյանքի, Ուրալի բնույթի մասին։ Հետևյալ տարին լույս տեսան նրա «ՄԱՐՏԻԿ-ՆԵՐ» ուրվագծերը, զարնանային լաստառաքման մասին՝ Չուսովոյ գետով։

Մամինի սկզբնական յերկերից ամենանշանակալիցը պետք է համարել «Պրիվալովյան միլիոններ» վեպը։ Վեպի գլխավոր հերոսը—Սերգեյ Պրիվալովը, միլիոնանոց ժառանգություն է ստանում, վորը մութ ճանապարհով կուտակել էյին նրա պապերն ու նախապապերը։ Ժառանգությունն ստանալուց հետո, հենց միանգամից նրան շրջապատում են մի խումբ սրբիկաներ։ Նրանք ձեռքները մեկնում են դեպի ժառանգությունը։ Միլիոնները հափըշտակվում են։ Մնանկացած ժառանգը թողնում է տունն այն հույսով, վորպեսզի նոր կյանք սկսի և քավի իր նախնիների վոճրագործությունները։

Վեպը հիմնված է իրական փաստերի վրա: Վեպի գործողության տեղը «Ժողովրդական Վրեժի» հրապարակում գտնված Խարխտոնովի տունն է, Սվերդլովսկում: Այդ տան մեջ կատարվում էյին վայրենի բռնություններ և սպանություններ: Հիմա այնտեղ տեղափոխված է բարձրագույն գյուղատնտեսական կոմունիստական դպրոցը:

Մյուս՝ «Լեոնային Բուլեն» յերկի մեջ Մամին-Սիբիրյակը պատկերում է լեոնարդոնաբերողների կյանքը: Հանձին գլխավոր հերոս Լապտովի դուրս է բերվում Ուրալի ամենախոշոր գործարանատերերից՝ Դեմիդովներից մեկը: Դեմիդովները հարյուրավոր տարիներ տիրապետում էյին Նեվյանսկի, Տագիլսկի և ուրիշ գործարաններ: Նրանք գիշատիչ կերպով վատնում էյին ուրալյան ընդերքների հարստությունները և անխնայորեն շահագործում գործարանային բնակչությանը: Նրանք Ուրալի աշխատավորների չարագույն թշնամիներն էյին:

Հետևյալ «Յերեք Վախճան» վեպում նկարագրվում է բանվորների կյանքը: Մամին-Սիբիրյակը պատմում է, թե ինչպես էյին բնակեցվում Ուրալի գործարանները, վորքան ծանր եր գործարանային բնակչության կյանքը: Այդ վեպում նա նկարագրում է իր հայրենիքը՝ Վիսիմո-Շալտանսկի գործարանը: Նա տեսավ ճորտատիրական ուժի մի ակնատեսներին: Այն ժամանակ աշխատանքի էյին քշում թմբուկով, հրամանով: Ամենափոքրիկ հանցանքի համար պատժում էյին խարաղանով: Յերեք «ազատություն» հայտարարեցին, ճորտատիրական բնակչության սկսեց ցրվել: Շատ բանվորներ իրենց ընտանիքներով գյուղի ճանապարհը բռնեցին: Բայց, դուրս յեկավ, վոր գյուղումն էլ լավ չի:

Միայն լեոնագործարանային Ուրալը չէ, վոր նկարագրում է Մամինը: Մամուլում յերևում է պատմվածքների մի շարք, վոսկու հանքերի մասին: «Յերակ», «Վոսկե գիշեր», «Քարաբլուրի վրա» և «Վոսկի» մեծ վեպը: Այստեղ նա տալիս է կյանքի պատկերների նկարագիրը մասնավոր վոսկարդոնաբերության ձեռնարկություններում:

Բանվորը և ձեռնարկատերը կանգնած են իրար դեմ, վորպես անհաշտ թշնամիներ: «Նախկին դաժանակիր աշխատանքն ու ռադմալեոնային արդյունաբերության ճորտությունն արդեն գոյություն չունի, ասում է Մամին-Սիբիրյակը, — բայց նրան փոխարինեց անտեսանելի թելերի մի ամբողջ սխտեմ, վորոնցով արդյունաբերող բնակչության կյանքն ամելի պինդ խճճվեց: Արդյուն-

նաբերող բանվորը պատսպարվելու տեղ չունի և նա գնաց նույն ընկերության մոտ ամենաանձեռնառու պայմաններով: Լրել հսկողությունը բանվորներին հանձնում էր ընկերության հսկողություն չունեցող կարգադրությանը, — և ընկերության ինչ ուղում էր կարող եր անել նրանց հետ»:

1893 թվին տպագրվեց վերջին խոշոր գրվածքը — «ՀԱՅ»: Մինչև հիմա Մամին-Սիբիրյակի յերկերում մենք տեսնում էյինք Ուրալի քաղաքները, Ուրալի գործարանները, Ուրալի վոսկու հանքերը: Իսկ այստեղ մեր առաջ կանգնում է մերձուրալյան գյուղը ցորենի անծայրածիր արտերով: Մամինը պատմում է կապիտալիզմի առաջին քայլերի մասին գյուղում: Կապիտալիստները գնում էյին հացը և գյուղացիներին հարեցնում ողիով: Գյուղը քայքայվում եր:

Լենինը Մամին-Սիբիրյակին բարձր եր գնահատում, վորպես գրող: Նա ասում եր, վոր Մամինի յերկերում «Ուրալի առանձնահատուկ կենցաղը ունի և դուրս գալիս», վոր նրանց մեջ լավ է նկարագրված «իրավագրկությունը, մթությունը և գործարաններին կապված բնակչության ստորացումը», նմանապես և բանվորներին ճնշողների սանձարձակ կյանքը:

Մամին-Սիբիրյակը մեռավ 1912 թվին նոյեմբերի 15-ին: Նա հինգ տարով միայն պակաս ապրեց մինչ այն ժամանակը, յերբ բանվորներն ու գյուղացիները դուրս քշեցին գործարանատերերին և ֆարբիկանտներին լեոնային բներից: Մամինի նկարագրած հին գործարանները՝ Տագիլսկի, Վերխ-Իսեստսկի, Վիսիմո-Շալտանսկի և ուրիշները, հիմա դարձել են հսկայական արդյունաբերական ձեռնարկություններ, առաջագեմ տեխնիկայով: Անգրուրալյան սևահող հարթություններում այժմ ստեղծված են հզոր սովխոզներ և կոլխոզներ: Դեմիդովյան Ուրալը դարձել է սոցիալիստական Ուրալ:

Մամին Սիբիրյակը գրական մեծ ժառանգություն է թողել՝ վեպեր, վիպակներ, պատմվածքներ, ուրվագծեր, հեքյաթներ, հիշողություններ: Նրա ամբողջ ստեղծագործությունը ներծծված է ջերմ համակրություն դեպի ճշմարտներն ու աշխատավոր մասնակցները: Այնուամենայնիվ Մամին-Սիբիրյակը հեղափոխական գրող չէր, պրոլետարական գրող չէր: Նա չէր տեսնում աշխատավորների միակ լեքը-հեղափոխությունը: Նա տեսնում եր ճորտատիրությանը փոխարինելու համար հենց նոր յեկած կապիտալիստական կարգի սարսափները, բայց նա պայքարի չէր կան-

չում նրանց դեմ: Նա կարծում էր, վոր այդ ամբողջը վատ էլ-
խանավորներից, չար մարդկանցից է:

Մամին-Սիրիբյակի յերկերը 80—90-ական թվականներին
ուրալյան իրականության հայելին է: Բայց Մամին-Սիրիբյակն
արտացոլել է վոչ միայն ճորտատիրական, Դեմիդովյան կար-
գերի խորտակումը և կապիտալիզմի առաջին քայլերն արդյու-
նաբերության մեջ և դյուղում, այլ և ուսու գրողներից առաջինը նա
չէր, վոր գրեց իսկական մանկական պատմվածքներ Ուրալի մասին:

1892 թվին Մամին-Սիրիբյակը տպագրում է իր առաջին
մանկական պատմվածքը՝ «Ստուդիոնայի»^{*)} ձեռնարկը:

Զորս տարի հետո նա գրում է իր սիրելի գիրքը—«Ալինուշ-
կալի հեքյաթները»:

Յեւ վերջապես իր կյանքի տարբեր շրջաններում ստեղծա-
գործում է մի շարք հետաքրքիր պատմվածքներ Ուրալի վոյսորդ-
ների կյանքի և կենդանիների հետ ունեցած նրանց սրտաշարժ
բարեկամության մասին:

Այդ պատմվածքները մտել են մեր ժողովածուի մեջ:


Կ, ԲՈԳՈՂՅՈՒԲՈՒԲՈՎ

*) Գետի անուն է: Մ. Թ.

Հեռու-հեռու, Ուրալյան լեռների հյուսիսային մա-
սում, անանցանելի անտառային խուլ տեղում թագ-
նվել է Տիչկի գյուղակը: Նա ընդամենը տասնևմեկ
տուն ունի, ավելի շուտ տասը, վորովհետև տասնևմեկեր-
որդ խրճիթը կանգնած է բոլորովին առանձին, հենց
անտառի մոտ: Գյուղի շուրջը ատամնավոր պատի պես
բարձրանում է մշտադալար փշատերև անտառը: Յեղևնի-
ների և պիխտաների^{*)} կատարների վրայից կարելի չէ տես-
նել մի քանի սարեր, վորոնք կարծես դիտմամբ թիկան-
ցել են Տիչկին ամեն կողմից ահագին կապտաժեռ-մոխ-
րագույն պատեղների նման: Այդ բոլորից Տիչկիին ավե-
լի մոտ է գտնվում սապատավոր Ռուչեվայա սարը, ալե-
հեր, թավարծի գաղաթով, վորը մառախլոտ լեզանակին
բոլորովին ծածկվում է թխագորշ ամպերով: Ռուչեվայա
սարերից շատ աղբյուրներ և առվակներ են վազում: Մի
ալդալիսի առվակ ուրախ թավալում է դեպի Տիչկի և
ամառ ու ձմեռ բոլորին խմեցնում սառնորակ, արցուն-
քի պես մաքուր ջուր:

Տիչկիում խրճիթները շինված են առանց վորևե պլա-
նի, ով ինչպես ցանկացել է: Յերկու խրճիթ կանգնած են հենց
դետակի վրա, մեկը սարի զառիվայր լանջին, իսկ մնացած-
ները վոչխարների պես ցրված են ավին: Տիչկիում, նույն-

*) Յեղևնու մի տեսակը: Մ. Թ.



խիւ փողոց չկա, իսկ խրճիթների արանքում վոլորվում ե տրորված արահետը: Ասենք Տիչկիի գեղջուկների համար փողոց ել համարյա թե, հարկավոր չե, վորովհետև հեծնելու բան ել չկա, վոր նրանով գնան: Տիչկիում վոչ վոք մի հատ սալ չունի: Ամռան աչգ գլուղակը բոլորովին կտրվում ե մնացած ամբողջ աշխարհից անանցանելի ճահիճներով, տղմուտներով և անտառային խցկվածքներով այնպես, վոր այնտեղ հազիվ կարելի չե անցնել վոտքով, անտառային նեղ կածաններով միայն և այն ել վոչ ամեն ժամանակ: Վատ յեղանակներին ուժգին են թռչկոտում լեռնային գետակները և հաճախ ե պատահում, վոր Տիչկիի վորսորդները չերեք որով սպասում են, թե չերբ կպակասի ջուրը:

Տիչկիի բոլոր գեղջուկները բնիկ վորսորդներ են: Ամառ-ձմեռ նրանք համարյա թե դուրս չեն գալիս անտառից, դեռ լավ ե, վոր ձեռք մեկնես կհասնի: Գեղջուկը տարվա ամեն ժամանակ իր հետ վորոշ վորս ե բերում. ձմեռը խփում են՝ արջեր, չերկամյա չեղջերուներ, գայլեր, աղվեսներ, աշնանը՝ սկյուռ, գարնանը՝ վայրենի այծեր, ամառը՝ ամեն տեսակի թռչուն: Մի խոսքով ամբողջ տարին ծանր և հաճախ վտանգավոր աշխատանք կա:

Այն խրճիթում, վոր գտնվում ե հենց անտառի մոտ, ապրում ե հին վորսորդ Յեմելյան իր փոքրիկ թոռնիկ Գրիշուտկայի հետ: Յեմելիայի խրճիթը բոլորովին խրվել ե հողի մեջ և աստծու աշխարհին մտիկ ե անում ընդամենը մի լուսամուտով. խրճիթի կտուրը վաղուց ե փտել, ծխնելուչից մնացել են միայն թափթփված աղյուսներ: Վոչ ցանկապատ, վոչ դարբաս, վոչ մարագ, վոչինչ չունեն Յեմելիայի խրճիթը: Միայն անտառ գերաններից շինված պատշգամբի տակ գիշերները վոռնում ե քաղցած Լիսկոն, Տիչկիի վորսորդական ամենալավ շներից մեկը: Ամեն անգամ, վորսից առաջ Յեմելյան չերեք որ քաղցած տանջում ե դժբախտ Լիսկոյին, վորպեսզի նա ավե-



լի լավ փնտռի վորսը և ամեն տեսակ զագանի հետքը գտնի:

— Պապի, ալ պապի, դժվարութեամբ հարցրեց մի անգամ լեռեկոյան փոքրիկ Գրիշուկան: Պապի, հիմա մարալներն իրենց հորթերի հետ են ման գալիս:

Հորթերի հետ են Գրիշուկ, — պատասխանեց Յեմելյան, շարունակելով գործել նոր տրեխները:

— Պապի, ալ թե մի հորթուկ ճարլի հա:

— Սպասիր, կճարենք... շողերն ընկնում են, մարալները հորթերի հետ կթագնվեն բուերից, հենց այդ ժամանակ ել քեզ համար հորթուկ կճարեմ Գրիշուկ:

Փոքրիկ տղան վոշինչ չպատասխանեց, այլ միայն ծանր հառաչեց: Գրիշուկն ընդամենը վեց տարեկան երեւա ալ չէր պառկած եր փաշտե լալն, նստարանի վրա, մարալի տաք մորթու տակ: Փոքրիկ տղան մըսել եր դեռ զարնանը, չերը ձյունը հալվում եր և մինչև հիմա չեր կարողանում առողջանալ: Նրա դեմքը գունատվել եր և ձգվել, աչքերը խոշորացել ելին, քիթը սրվել եր: Յեմելյան տեսնում եր, թե ինչպես իր թոռնիկը հալվում եր վոշ թե որերով այլ ժամերով, բայց չեր խմանում ինչ ճարաներ ցավին: Ինչ վոր խոտի ջուր խմացրեց, չերկու անգամ բաղնիք տալով, — հիվանդը դեպի լավը չեր գնում: Տղան համարյա վոշինչ չեր ուտում: Սև հացի մի կտոր ծամծմում եր ու թեղնում: Գարնանից աղը դրած ալծի միս եր մնացել, բայց Գրիշուկը նրան նայել անգամ չեր կարողանում:

— Տեսնում ես, սիրան ինչ ե ուզում, — հորթուկ, մտածում եր ծեր Յեմելյան տրեխը քշփորելով: «Ձե, պետք ե ճարել»...

Յեմելյան լոթանասուն տարեկան եր, Ալեհեր, կորացած, նիհար, չերկար ձեռքերով: Յեմելիայի ձեռքերի մատները հազիվ ելին ծալվում: Նրանք վոնց վոր փաշտի ձյուղեր լինելին: Բայց նա դեռ ման եր գալիս առուջդ և բան ու ման եր ճարում վորսորդութեամբ: Միայն աչքերն ելին, վոր սկսել ելին սաստիկ դափաճանել ծերուկին հատկապես ձմեռը, չերը ձյունը պեծին ե տալիս և չորս կողմը փալվում ե ագամանդի փոշիով: Յեմելիայի աչքերի պատճառով ծխներույցն եր եր քանդվել, կտուրն եր եր փթել, նա ինքն ել հաճախակի նստում ե իր խրճիթում, չեր ուրիշներն անտառումն են:

Ժամանակն է, վոր ծերունին պառկի տաք վառարանին, բայց փոխարինող չկա, մյուս կողմից էլ հրեն, Գրիշուտկեն մնաց գրկին, պետք է հոգ տանել նրա մասին... Գրիշուտկայի հայրը չերեք տարի առաջ մեռավ ջերմախտից, մորը գալերը կերան, չերբ նա փոքրիկ Գրիշուտկայի հետ ձմեռվա չերեկոյին գյուղից վերադառնում էր իր խրճիթը: Յերեսան ազատվեց ինչ վոր հրաշքով: Մինչեռ գալերը կրծում էին մոր վոտքերը, նա ծածկեց չերեսային իր մարմնով և Գրիշուտկան մնաց կենդանի:

Ծեր պապն էր մեծացնում թոռնիկին, այն էլ հիվանդությունը վրա հասավ: Դժբախտությունը մենակ չի գալիս...

II

Հունիս ամսվա վերջին որերն էին, Տիչկիի ամենաշոգ ժամանակը: Տանը մնացել էին միայն ծերունիներն ու փոքրերը: Վորտորդները վաղուց էին թափառում անտառում մարալների չետից: Յեմելիայի խրճիթում խեղճ Լիսկոն արգեն չերրորդ որն էր վռնում քաղցից, ինչպես ձմեռվա գալի:

«Յերեում է, վոր Յեմելյան վորսի գնալու պատրաստություն է տեսնում» — ասում էին կինարմատները գյուղում:

Այդ ճիշտ էր: Իսկապես շուտով Յեմելյան դուրս չեկավ իր խրճիթից, կայծքարի հրացանը ձեռքին արձակեց Լիսկոյին և ուղեւորվեց դեպի անտառ: Նրա հագի տրեխները նոր էին, հացով մաղախը շալակին, ճղճղված բաշկոնը հագին, գլխին էլ մարալի տաք փափախ: Ծերունին վաղուց արգեն գլխարկ չեր գնում, այլ ամառ-ձմեռ ման էր գալիս մարալի իր փափախով, վորը հրաշալի կերպով պաշտպանում էր նրա ճաղատ գլուխը ձմեռվա ցրտից և ամառվա շոգից:

— Դեհ, Գրիշուկ, կաղդուրվիր առանց ինձ, ասաց Յեմելյան թոռնիկին, մնաս բարին ասելիս: — Բեզ կխնամի պառավ Մալանյան, քանի դեռ չես հորթի չետից եմ գնում...

— Բայց հորթուկ կբերես վոր, պապի:

— Կբերեմ, ասաց:

— Դեղնավուն...

— Դեղնավուն...

— Ե՛հ չես կսպասեմ քեզ... Տես, չվրիպես կրակելու ժամանակ...

Յեմելյան վաղուց էր պատրաստվում մարալների հետևից գնալ, բայց միշտ մեղք էր գալիս թոռնիկին մենակ թողնել, իսկ այժմ նա կարծես թե դեպի լավն է գնում և ծերունին վճռեց վորձել բախտը: Դե, պառավ Մալանյան էլ կնայի տղային — այդպես ավելի լավ է, քան թե ինքը մենակ պառկի խրճիթում:

Անտառում Յեմելյան վոնց վոր իրենց տանը լիներ, Դե, վոնց կարող էր նա այդ անտառը չիմանալ, չերբ ամբողջ կյանքում թափառում էր նրա մեջ հրացանով, շան հետ: Բոլոր կածանները, բոլոր նշանները՝ ամեն ինչ չորս կողմը հարյուր վերստի վրա գիտեր ծերունին: Իսկ հիմա, հունիսի վերջին, անտառում առանձնապես լավ էր. խոտը գեղեցիկ կերպով խաչտաբդեռում էր բացված ծաղիկներով, ողբ լիքն էր հոտավետ խոտերի հրաշալի բույրով, իսկ չերկնքից նայում էր ամառվա սիրալիր արևը, վոր պայծառ լույսով վողողել էր և՛ անտառը և՛ խոտը, և՛ թփուտում կարկաչող գետակը և հեռավոր սարերը: Այո, հրաշալի, լավ էր չորս կողմը, և Յեմելյան մի քանի անգամ կանգ առավ, վորպեսզի շունչ քաշի և հետ նայի: Կածանը, վորով գնում էր նա, ոճի պես շուլալվում էր դեպի սարը, մի կողմ թողնելով մեծ քարերը և զառիվալը գողավորությունները: Խոշոր անտառը կոտորված էր, իսկ ճանապարհի մոտ կուչ

եյին լեկել ջահել կեշիներ, ցախկեռասի թփեր և սպիտակ վրանի պես սփռվել եր արջածառուտը: Այսու աչն կողմ հանդիպում եյին խիտ, մեջ ընդ մեջ անտառներ, լերիտասարդ լեզենուտից, վորը կանաչ, խողանակի պես կանգնում եր ճանապարհի լերկու կողմը և ուրախ ցցվում թաթանման, թավարծի ճյուղերով: Մի տեղ, սարի կեսից ընդարձակ տեսարան եր բացվում գետի հեռավոր սարերն ու գետի Տիշկին: Գյուղակը բոլորովին ծածկվեց լեռների խորը հովտի հատակում և այնտեղից գյուղական խրճիթները սև կետերի նման եյին թվում: Յեմեյան, աչքերն արևից պաշտպանելով, լերկար նայում եր իր խրճիթին և մտածում եր թոռնիկի մասին:

— Դե, Լիսկո, փնտիր—ասաց Յեմեյան, չերը նրանք իջան սարից և կածանից ծովեցին գետի համատարած թավ լեզենուտը:

Լիսկոյի համար պետք չեր հրամանը կրկնել: Նա շատ լավ գիտեր իր գործը և իր սուր դունչը գետին հառելով, կորավ խիտ, կանաչ թավուտում: Միայն մի կարճ ժամանակ փալկտեց նրա մեջքը գեղին բծերով:

Վորսն սկսվեց:

Ահագին լեզենիներ բարձրանում եյին վեր, գետի լերկինք իրենց սուր գաղաթներով: Թավարծի ճյուղերը հյուսվում եյին միմիանց հետ, վորսորդի գլխավերևը կազմելով անթափանցելի նեղ կամար, վորի միջով տեղ-տեղ միայն ուրախ նայում ե արեգակի ճառագայթը և վոսկե բծով այրում ե գեղնավուն մամուռը կամ արծվաճանկի լայն տերևը: Այդպիսի անտառում խոտ չի բուսնում և Յեմեյան գնում եր փափուկ, դեղնավուն մամուռի վրայով, ինչպես գորգի վրայով: Վորսորդը մի քանի ժամ քարշ լեկավ այդ անտառում: Լիսկոն կարծես ջրասուզ լեղավ: Միայն չերբեմն ճյուղ ե ճռթկում վոտքի տակ կամ թռչում ե խալտարդետ փայտփորը: Յեմեյան ուշադրությամբ

գիտում եր ամեն ինչ չորս կողմը: չկա արդյոք, մի տեղ վորեւե հետք, մարալը ճյուղ չի կտորել արդյոք լեղջուրներով, մամուռի վրա չէն դրոշմվել արդյոք կճղակներ, չի կրծած արդյոք գուլձերի խոտը:

Սկսեց մթնել: Ծերունին հոգնածություն գագաց: Պետք եր մտածել գիշերով մասին: «Հավանորեն մարալներին փախցրել են ուրիշ վորսորդներ», մտածում եր Յեմեյան: Բայց ահա լավեց Լիսկոյի թույլ վոռնոցը և առջևում ճյուղերը ճրթճրթացին: Յեմեյան հենվեց լեղինու բնին և սպասեց...

Դա մարալ եր, իսկական տասնեղջուրանի գեղեցկատես մարալ, անտառային կենդանիներից ամենաազնվացեղը: Ահա նա դեց իր ճյուղքալի լեղջուրները մեջքին և ուշադրությամբ լսում ե հոտոտելով ողը, վորպեսզի հետևյալ ըոպեյին կայծակի պես կորչի կանաչ թավուտում: Ծերունի Յեմեյան տեսավ մարալին, բայց ինքը շատ ե հեռու նրանից, գնդակը չի հասնի նրան: Լիսկոն պառկել ե թավուտում և չի համարձակվում շնչել, սպասելով կրակոցի. նա իմացել ե մարալի տեղը. զգում ե նրա հոտը... Ահա թնդաց կրակոցը և մարալը նետի պես սլացավ առաջ: Յեմեյան վրիպեց, իսկ Լիսկոն փնտրեց իրեն կրառտող սովից: Խեղճ շունն արդեն զգում եր մարալի տապակած մսի հոտը, տեսավ ախորժալի վոսկորը, վոր ձգում ե նրա տերը, իսկ դրա փոխարեն պետք ե պառկի քնելու սոված փորով... շատ զգվելի պատմություն ե...

«Ե, թող գնա իր համար ման գա», բարձրաձայն դատում եր Յեմեյան, չերը նա լերեկոյան նստած եր հարյուր տարեկան խիտ լեզենուտ տակ: «Մենք պետք ե հորթուկ ձարենք, Լիսկո... խիր»: Շունը խղճալի կերպով պոչն եր պտտում միայն, սուր դունչը գնելով առջևի թաթերի արանքում: Այսոր նրան հաղիվ մի կտոր չոր հաց բաժին ընկավ, վորը ձգեց նրան Յեմեյան:



Յեմելյան լերեք որ թափառեց անտառում Լիսկոյի հետ և ամբողջն իղուր. մարալ չպատահեց հորթի հետ: Ծերունին զգում էր, վոր ուժասպառ է լինում, բայց դատարկաձեռն վերադառնալ չէր վճռում: Լիսկոն ել տխրեց և բոլորովին նիհարեց, թեև հաջողվեց նապաստակի մի գուլգ դեռատի ձուտ բռնել:

Ստիպված ելին յերրորդ գիշերն անցկացնել անտառում կրակի մոտ: Բայց թե յերազի մեջ ել ծերունի Յեմելյան շարունակ տեսնում էր դեղին հորթին, վորի մասին խնդրում էր նրան Գրիշուկը: Ծերունին լերկար ժամանակ հետևում էր իր վորսին, նշան էր բռնում, բայց մարալն ամեն անգամ փախչում էր նրա քթի տակից: Հավանորեն Լիսկոն ել էր զառանցում մարալների մասին, վորովհետև մի քանի անգամ փղպտաց և սկսեց խուլ կերպով հաջել:

Միայն չորրորդ որը, յերբ վորսորդն ել, շունն ել ամբողջապես ուժից ընկան, նրանք բոլորովին պատահմամբ գտան մարալի և հորթի հետքերը: Այդ պատահեց յեղևնու խիտ մացառուտում, սարի լանջին: Ամենից առաջ Լիսկոն գտավ աչն տեղը, ուր գիշերել էր մարալը, իսկ հետո հոտոտեց և խճճված հետքը խոտի մեջ:

«Մայրը հորթի հետ»,—մտածում էր Յեմելյան, խոտի վրա դիտելով մեծ և փոքր կճղակների հետքերը: «Այսոր առավոտյան այստեղ են յեղել... Լիսկո, փնտռիր, աղավնյակ»...

Որը տոթ էր: Արևը դադում էր անխնա: Շունը լեզուն հանած հոտոտում էր թփերն ու խոտը: Յեմելյան հազիվ էր քարշ տալիս վոտքերը: Բայց ահա ծանոթ ճըռթկոց և խշխշոց... Լիսկոն ընկավ խոտի մեջ և չի շարժ-

վում: Յեմելյայի ականջում հնչում են թոռնիկի խոսքերը. «պապի, հորթուկ ճարի... և վոր անպատճառ դեղնավուն լինի»... Ահա և մայրը...

Դա հրաշալի մարալ էր—եզր: Նա կանգնած էր անտառի ծայրին և յնրկչոտությամբ նայում էր ուղղակի Յեմելյային: Բզզացող միջատների մի խմբակ պտտվում էր մարալի գլխավերևը և ստիպում նրան վեր թռչել:

«Ձե, դու ինձ չես խաբի»—մտածում էր Յեմելյան, դուրս գալով իր դարանից...

Մարալը վաղուց էր զգացել վորսորդի ներկայությունը, բայց համարձակ հետևում էր նրա շարժումներին:

«Այդ մայրն է ինձ հորթից հեռացնում»—մտածում էր Յեմելյան, շարունակ ավելի մոտ սողալով:

Յերբ ծերունին ուզեց նշան բռնել մարալին, նա զգուշությամբ մի քանի ուժեն հեռու փախավ և նորից կանգ առավ:

Յեմելյան նորից փորձող տվեց իր հրացանի հետ: Կրկին դանդաղ դողեզող մոտեցում և մարալը նորից թագնվեց, հենց վոր Յեմելյան ուզեց կրակել:

«Հորթից չի հեռանալ»,—շնչաց Յեմելյան, մի քանի ժամվա ընթացքում շտապ հետևելով գազանին:

Մարդու այդ պալքարը կենդանու հետ շարունակվեց ուղիղ մինչև յերեկո: Ազնվացեղ կենդանին կյանքը տասն անգամ վտանգի յենթարկեց, աշխատելով հեռու պահել վորսորդին թագնված մարալիկից: Ծերունի Յեմելյան և բարկանում էր և զարմանում իր գոհի համարձակության վրա... Ձե վոր մեկն է, նա չի հեռանա նրանից... քանի անգամ է պատահել, վոր նա սպանել է ինքն իրեն զոհաբերող մորը: Լիսկոն ստվերի նման սողում էր տիրոջ հետևից և յերբ նա աչքից բոլորովին կորցրեց մարալին զգուշությամբ հրեց նրան իր տաք քթով:

Ծերունին հետ նայեց ու նստեց: Իրենից տասը սա-



Ժեն հեռավորութեան վրա, ցախկերասի թփի տակ կանգնած եր հենց աչն գեղնաւուն հորթուկը, վաղի հետեւից նա թափառում եր ամբողջ յերեք ուր: Դա մի շատ սիրուն մարալիկ եր, ընդամենը մի քանի շաբաթական, գեղին աղվամազով և բարալիկ տոտիկներով, գեղեցիկ գլխիկը հետ վեր քաշած և նա բարակ վիզն առաջ եր մեկնում, յերբ աշխատում եր մի ավելի բարձր ճյուղ բռնել: Վորսորդը, շնչակտուր, վեր քաշեց հրացանի բլթակը և նշան բռնեց փոքրիկ կենդանու գլխին:

Մի ակնթարթ ևս և փոքրիկ մարալիկը կգլորվեր խոտի վրա մահամերձ ճիշով, բայց հենց այդ վարկյանին ծերունի վորսորդը հիշեց, վորպիսի հերոսութեամբ եր պաշտպանում հորթուկին իր մայրը, հիշեց՝ թե ինչպէս իր Գրիշուկի մայրն ազատեց վորդուն գայլերից՝ իր մարմնով... Կարծես ինչ վոր մի բան կտրվեց ծերունի Յեմելիայի կրծքի տակ, և նա հրացանը կախ գցեց: Մարալիկն առաջվա նման մահ եր գալիս թփի մոտ, պոկելով տերեւիկները և ախանջ դնելով ամենավորձրիկ շրջունին: Յեմելյան արագ վեր կացավ և շվացրեց—փոքրիկ կենդանին կայծակի արագութեամբ թազնվեց թփերի մեջ:

— Տեսնում ես, ինչ վազկանն ե — ասաց ծերունին մտածկոտ ժպտալով—են տեսներն եր, ինչ նրան տեսավ. նեա եր կարծես... Լիսկո, ախր մեր մարալիկը փախավ: Վոչինչ, այդ վազկանը դեռ պիտի մեծանա... Համա ճարպիկն ե, հա...

Ծերունին լերկար կանգնեց միկնուլն տեղում և շարունակ ժպտում եր վազկանին հիշելով...

Հետեւյալ ուր Յեմելյան մոտենում եր իր խրճիթին:

— Այ պապի հորթուկ ես բերե՛լ—դիմաւորեց նրան Գրիշան, վոր շարունակ սպասում եր ծերունուն անհամբերութեամբ:

— Ձե, Գրիշուկ... տեսա նրան...

— Դեղնավուն եր:

— Ինքը գեղնավուն եր, իսկ դնչիկը սև: Կանգնել ե թփերի տակ և տերևներ ե պոկոտում... Յես նշան բռնեցի...

— Յեվ վրիպեցի՞ր:

— Ձե, Գրիշուկ, խղճացի փոքր զազանին... մորը խղճացի: Շվացրի թե չե, արդեն նա, հորթուկը—վոր պուկ չեկավ դեպի թափուտը են եր, ինչ տեսա նրան: Փախավ են չարաճին...

Ծերունին չերկար ժամանակ պատմում եւ տղային, թե ինչպէս ինքը յերեք ու անտառում փնտռում եր հորթուկին և թե ինչպէս նա փախաւ իրենից: Տղան լսում եր և ուրախ ծիծաղում ծերունկ պապի հետ:

— Բայց չես քեզ համար ծեր խլահալ եմ բերել, Գրիշուկ, — ավելացրեց Յեմելյան, պատմութունը վերջացնելով: Սրան, մեկ է, գալիքը կուտելին...

Սլահաւը փետրեցին և դրեցին կճոճի մեջ: Հիվանդ տղան բավականութամբ կերավ խլահալի շորվեն և ննջալով մի քանի անգամ հարցրեց ծերունուն.

— Ասում ես փախաւ, հա — հորթուկը:

— Փախաւ, Գրիշուկ:

— Դեղնավուն եր:

— Ամբողջապէս դեղին, միայն դնչիկն եր սև, մեկ էլ կճղակը:

Տղան այդպէս էլ քնեց և ամբողջ գիշերը տեսաւ փոքրիկ դեղին մարալիկին, վորն ուրախ զբոսնում եր անտառում իր մոր հետ. իսկ ծերունին քնած եր վառարանի վրա և նույնպէս ծիծաղում եր լերագուն:

1884 թ.

Ծերունին պառկած եր իր թախտի վրա, վառարանի մոտ, ծածկված մարալի մազը տված մորթու մուշտակում:


Շուտ եր թե ուշ — նա չգիտեր, թեպէտ չեր ել կարող խմանալ, վորովհետև ուշ եր լուսանում, իսկ չեր կինքը դեռ իրիկվանից պատած եր աշնանային ցածրիկ թուխպերով: Նա չեր ուզում վեր կենալ: Խրճիթում ցուրտ եր, իսկ նրա մեջքն ու վոտքերն արդեն մի քանի ուր եր ինչ ցավում ելին: Քնել նույնպէս չեր կամենում, իսկ պառկել եր հենց աչնպէս, ժամանցի համար: Յեւ ինչ՞ու համար պիտի շտապեր վոր: Նրան արթնացրեց դռան զգուշ շանգոտոցը: — Դա փոքրիկ, խաչաբղետ վոգուլյան շունը, Մուզգարիկոն եր խնդրում ներս թողնել, վորն արդեն տասը տարի չեր ապրում եր այդ խրճիթում:

— Յես հիմի քեզ ցույց կտամ, Մուզգարիկո. — փրնթփնթաց ծերունին՝ գլուխն ել հետը փաթաթվելով իր մուշտակում: — Դու հլա դեռ չանգուիր...

Շունը միառժամանակ դադարեց դռուր քերծելուց իր թաթով և հետո հանկարծ չերկար ու մղկտալի ձայնով վռնաց:

— Ախ, ուր եր, մի գալիքն ուտելին քեզ. — հայհոյեց ծերունին, թախտից վեր կենալով:

Նա մթության մեջ մոտեցաւ դռանը, բացեց աչն և ամբողջ հասկացաւ — ի՞նչից է ցավում իր մեջքը և ինչու համար է վռնում շունը: Ամբողջը, ինչ վոր կարելի չեր



տեսնել կիսաբաց դռնով, ծածկված եր ձյունով: Այո նա այժմ պարզ տեսավ թե ինչպես ողի մեջ պտուղտ եր գալիս կենդանի ցանցը՝ փափուկ, թավ ձյունիկներից: Խրճիթում մուկն եր, իսկ ձյան պատճառով ամեն բան տեսնվում եր, և՛ գետի ափն կողմն ընկած անտառի ատամնավոր պատը, և՛ ուռած, սեւիկն տվող գետը, և՛ քարոտ հրվանդանը, վոր մտել եր գետի մեջ կտոր գոգով:

Խելոք շունը նստել եր բաց դռան առաջ և աջնալիս խելոք, վառվռուն աչքերով եր նայում տիրոջ վրա:

— Ե, ինչ ե, նշանակում ե վերջացավ: Պատասխանեց ծերունին շան աչքերի համը հարցին:— Վոչինչ չես կարող անել, լեղբայր... պրծավ...

Շունը պոչը պտտեց և մեղմ մեղստաց ափն փաղաքշական մեղստոցով, վորով դիմավորում եր միայն տիրոջը:

Եհ, պրծավ, դե ինչ արած, Մուզգարկո. գլորվեց մեր գեղեցիկ ամառը, իսկ հիմա կպառկենք վորջում...

Այդ խոսքերին հետեւեց մի թեթեւ թուխք և Մուզգարկոն տիրոջից առաջ գտնվեց խրճիթում:


— Ձմեռ չես սիրում, հա — խոսում եր շան հետ, վառելով հին, անտաշ քարերից շինված վառարանը — դուր չի գալիս հա...

Վառարանի ճակատին տատանվող բոցը լուսավորեց ափն թախտը, վորի վրա քնում եր ծերունին, և խրճիթի ամբողջ անկյունը: Մթուկյան միջից դուրս ելին ցցվում մրոտած գերանները, վորոնք տեղ-տեղ ծածկված ելին բորբոսով՝ անկյունում կախ տված ուռկանը, չափարած նոր արեխները, սկյուռի մի քանի մորթիներ, վոր որորվում ելին փաշտե կեռի վրա, իսկ ամենից մոտիկ ինքը՝ — ծերունին — կորացած, ալեհեր, սարսափելի դեմքով:

Այդ դեմքը կարծես տեղահան արած լինեց մի կողմի վրա աջնալիս, վոր ձախ աչքը դուրս եր հոսել և ծածկվում եր ուռած կոպով: Ասենք անձոռնությունը մասամբ քողարկվում եր ալեհեր մորուքով: Մուզգարկոյի համար ծերունին վոչ գեղեցիկ եր և վոչ ել տգեղ:

Մինչդեռ ծերունին վառարանն եր վառում, արդեն լուսանում եր: Ձմեռալին գորշ որն աջնալիսի դժվարութեամբ բացվեց, կարծես թե անտեսանելի արեւի համար ցավալի լեւ լուսավորել: Խրճիթում հազիվ կարելի լեւ նշմարել հեռավոր պատը, վորի մոտ ձգված ելին փաշտա ծանր տապալներից շինված լափն թախտերը: Կիսով չափ ձկան փամփուռտով ծեփած միակ լուսամուտը հազիվ եր լույս տալիս:

Մուզգարկոն նստած եր շեմքի մոտ և համբերութեամբ հետեւում եր տիրոջը, չերբեմն պտտացնելով պոչը: Բայց թե շան համբերությունն ել վերջ ունի և Մուզգարկոն նորից թուլլ մեղստաց:



— Ես բոլորեցի, մի շտապիր, — պատասխանեց նրան ծերունին, ջրով լիքը չուզուեն փոքրիկ կաթսան կրակին մոտեցնելով. — կհասնես...

Մուգգարկոն պառկեց և սրադունչ գլուխն առջևի թաթերի մեջ դնելով, աչքը տիրոջ վրայից չեր հեռացնում: Յերը ծերունին զգգոված թիկնոցն ուսերին ձգեց, շունն ուրախ — ուրախ հաջեց և նետվեց դեպի դուռը:

— Ես չերրորդ որն ե, նրա համար են գոտկատեղիս վողերը ցավում, — բացատրեց ծերունին շանը, գնալիս: — Եղբես ել դուրս լեկավ, վոր լեղանակը խառն ե: Հրեն, ձյունը վոնց ե թափվում:

Մի գիշերվա մեջ ամբողջը, չորս կողմում բոլորովին փոխվեց. անտառն ավելի մոտիկ եր թվում, գետակը կարծես թե նեղացել եր, իսկ ձմեռային ցածր ամպերը սողում ելին ուղղակի լեռերի լեռեսին և միայն չեյին կախվում յեղևներին և պիտտաների գազաթներից: Ընդհանրապես տեսարանն ամենատխուրն եր, իսկ ձյան փաթիլները շարունակում ելին պտտվել ողբի մեջ և անձալն ընկնում ելին մեռած հողի վրա:

Ծերունին հետ նայեց իր խրճիթից ալն կողմ, նրա հետևից հեռանում եր ժանգոտած ճահիճը, վոր մասամբ պատած եր թփիկներով և ճահճային կոշտ խոտով: Փոքրիկ ընդհատումներով ալդ ճահիճը տարածվում եր հիսուն վերստ և բաժանում եր խրճիթն ամբողջ կենդանի աշխարհից: Բայց վորքան փոքրիկ լեռեվաց ծերունու ալդ խրճիթը — կարծես թե մի գիշերում հողի մեջ եր խրվել...

Ափին մոտ եր բերված հողեսպան կոշված մակուկը: Մուգգարկոն առաջինը թռավ նրա վրա, առջևի թաթերով հենվեց լեզրին և սուր նայեց գետնիվեր, ալնտեղ, ուր դուրս ե պրծել հրվանդանը և թույլ փնդատաց:

— Ինչի վրա լես ուրախացել առաջուց — պատաս-

խանեց նրան ծերունին — սպասիր, կարող ե պատահել, վոր վոչինչ չկա...

Շունը գիտեր, վոր կա և նորից փնտրեց. նա տեսել եր շրի խոր տեղում ձգած կարթաթուկի սուզված լողանները: Նախկը թռավ գետնի վեր, հենց ամբին մոտ: Ծերունին կանգնած եր վրա և ձողին հենվելով՝ առաջ եր քշում նախկը: Շան փնտրուցից նա լել եր խմանում, վոր վորս կլինի: Կարթաթուկն իսկապես սուզվել եր հենց մեջ տեղից և լերը նախկը մոտեցավ, փայտյա լողանները ցած գնացին:

— Կա, Մուղգարկո...

Կարթաթուկը կազմված եր գետի լայնքին գցած պարանից, վորի վրա շարված ելին կարթաթեւեր և մազի թելիկներ: Յուրաքանչյուր կարթաթեւ վերջանում եր սուր կարթով: Մոտենալով կարթաթուկի ծայրին, ծերունին զգուշութեամբ սկսեց հավաքել աչն նավակի մեջ: Լավ վորս եր. լերկու մեծ սիւղ, մի քանի շիղաձուկ մի հատ գայլաձուկ և ամբողջ հինգ հատ ստերլյազ*): Գայլաձուկը մեծն եր ընկել և ծերունին շատ շարժարավեց նրա հետ: Ծերունին զգուշութեամբ մոտ քաշեց նրան նավակին և առաջուց խլացրեց իր ձողով, իսկ հետո արդեն դուրս քաշեց: Մուղգարկոն նստած եր նավակի քթում և ուշադրութեամբ հետևում եր աշխատանքին:

— Ստերլյազ սիրում ես — աչքաճիճուկ եր անում նրան ծերունին, ձուկը ցույց տալով, — բայց բռնել չես կարողանում... Համբերիր, այսոր ձկնապուր կեփենք: Յեղանակը խառնած ժամանակ ձուկն ավելի լավ ե գնում դեպի կարթը: Հիմա նա խոր տեղում ե հավաքվում ձմեռը ծվարելու համար, իսկ մենք նրան խորքում ել կվորսանք: Ծմբողջը մերը կլինի... Ավելի լավ ե հետո գնանք... դե,

*) Ձկան տեսակ: Մ. Թ.

իսկ հիմա, հաջա, տուն: Շիղաձկները կախ տանք, չորացնենք, իսկ հետո կծախենք վաճառականներին:

Ծերունին հենց գարնանից եր ձուկը պաշարում. մի մասը քամհարում եր արևի տակ, մյուսը չորացնում եր խրճիթում, իսկ ավելցուկը թափում եր ջրհորի նման խոր փոսի մեջ, — այդ վերջինը ծառայում եր վորպես կեր Մուղգարկոյի համար: Թարմ ձուկն ամբողջ տարին չեք հատնում նրա մոտ, միայն աղը չեք հերիքում, վորպեսզի ձուկն աղ դնի, մեկ ել՝ ամեն ժամանակ հաց չեք ճարվում, ինչպես հիմա լեր: Նրա պաշարը թողնում ելին ձմեռից ձմեռ:

— Շուտով դուժակը կգա, — բացատրում եր ծերունին շանը. — ինձ ու քեզ համար կբերեն հաց, և՛ աղ, և՛ վառող... մենակ թե անա մեր խրճիթը բոլորովին քանդվել ե, Մուղգարկո:

Աշնանալին ուրը կարճ ե: Ծերունին ամբողջ ժամանակն անց եր կացնում իր խրճիթի մոտ, ուղղելով և աչս և աչն, վորպեսզի ավելի լավ պատրաստվի ձմեռվա համար: Մի տեղ մամուռը դուրս եր լեկել գերանի ափսոսներից, մի ուրիշ տեղ գերանն եր փռել, լերբորդում անկունը բոլորովին կախ ե ընկել և մեկել են տեսար՝ նստեց: Վաղուց ժամանակն ե նոր խրճիթ շինելու, բայց մենակ, միեկունսն ե, վոչինչ չի կարելի անել:

— Մի կերպ կարող ե, ձմեռը դուրս գցեմ, բարձրաձայն մտածում եր ծերունին կացինով թխկթխկացնելով պատին, — բայց վոր գնմակը, գա... են ժամանակ...

Յեկած ձյունը ծերունու բոլոր մտքերը կապում եր դուժակի հետ, վորը գալիս եր ճանապարհն առաջին անգամ բացվելիս, լերը գետերն սկսում ելին սառչել: Տարվա մեջ նա մի անգամ եր մարդ տեսնում միայն: Մտածելու բան կար: Մուղգարկոն շատ լավ եր հասկանում տիրոջ

յուրաքանչյուր բառը և միայն դոճակ բառը լսելիս նա-
յում եր գետնիվեր և ուրախ-ուրախ փնդատում, կարծես
ուզում եր պատասխանել, վոր հրեն՝ ալ թե վորտեղից
կգա գոճակը, հրվանդանի հետեւից:

Խրճիթին կից շինված եր բավական մեծ, ցածրիկ
կացարան, վորն ամառը ծառայում եր վորպես շտեմա-
րան, իսկ ձմեռն իբրեւ իջեւան՝ կառապանների գիշերե-
լու տեղ: Վորպեսզի ձիերին պաշտպանեն ձմեռվա վատ
լեղանակին, ծերոսին աշնանից իջևանի մոտ լերիտա-
սարդ, թավոտ պիտտաներից մեծ ցանկապատ եր շինում:
Ձիերը դժվար ճանապարհից հալից կնկներն, կքրտներն,
իսկ սառը քամին փչում ե, մանավանդ արևածագին: Ախ,
ինչպիսի քամի չե լինում.— նույնիսկ ծառը չի գիմանում
և իր ճյուղերը շուռ ե տալիս դեպի տաք կողմը, վորտե-
ղից գարնանը թռչում ե ամեն տեսակ թռչուն:

Աշխատանքը վերջացնելով, ծերունին նստեց ծառի
կոճղի կտորի վրա խրճիթի լուսամուտի տակ և խորասուզ-
վեց մտքերի մեջ: Շունը նստեց նրա վտաքերի մոտ և
իր խելոք գլուխը դրեց նրա ծնկների վրա:

Ի՞նչի մասին եր մտածում ծերունին: Առաջին ճյու-
նը միշտ և ուրախացնում եր նրան և վշտացնում, հիշե-
ցնելով հինը, ինչ վոր մնացել եր ահա այն սարերի հե-
տեւը, վորոնցից դուրս ե գալիս Ստուգչոնայա գետը: Այն-
տեղ ուներ և՛ տուն, և՛ ընտանիք, հարազատներ ել կա-
լին, իսկ հիմա վոչ վոք չի մնացել: Նա բոլորից ել շատ
ապրեց և ահա թե աստված ուր հասցրեց նրան՝ կյանքը
վերջացնելու համար: Կմեռնի—աչքը փակող չկա: Ախ,
ծանր ե ծերության մենակութունը, իսկ այստեղ ել չորս
կողմն անտառ, հավիտենական լուութուն և չկա մեկը,
վոր մի խոսք ասես:

Մի մխիթարութուն ե մնացել— շունը: Յեւ ծերու-
նին ել նրան ավելի շատ եր սիրում, քան սիրում են

մարդիք միմիանց: Չե՞ վոր շունը նրա համար ամեն ինչ եր և
նույնպես սիրում եր տիրոջը: Շատ անգամ ե պատահել
այնպես, վոր վորսի ժամանակ Մուզգարկոն գոհաբերել ե
իր շնային կյանքը տիրոջ համար, արդեն չերկու անգամ
արջը կոխրճեց նրան անլերկյուղ քաջության պատճառով:

—Բայց ախր ծերացել ես դու, Մուզգարկո, ասում
եր ծերունին, շուրջով շան մեջքը—հրեն, մեջքդ ել ե
ցցվել, վոնց վոր գալլինը, ատամներդ ել բթացել են, աչ-
քերդ՝ մթնել... Եհ, ծերուկ, ծերուկ, ձմեռը քեզ կուտեն
գալլերը: Յերեւում ե, վոր իմ ու քո մեռնելու ժամա-
նակն ե...

Շունը համաձայն եր նաև մեռնել... Նա միայն ավե-
լի ու ավելի սեղմ եր հպվում տիրոջն իր ամբողջ մարմնով
և խղճալի կերպով թարթում եր աչքերը:

Իսկ նա նստել եր և շարունակ նայում եր սեվացած
գետին, խուլ անտառին, վորը կանաչ պատի պես հարյու-
րավոր վերստեր գնում ե այնտեղ՝ սառը ծովի մոտ, դե-
պի Ստուգչոնայի ակունքների հաղիվ տեսանելի սարերը,
—նայում եր և չեր շարժվում, տարված եր ծանր ծերու-
թյան մտքերով:

Ահա թե ինչի մասին եր մտածում ծերունին:

Նա ծնվել և մեծացել եր Կովա գետի վրա բազմած
խուլ Չալպան գյուղակում: Տեղը խուլ եր, անտառոտ, հաց
չեր բուսնում, գեղջուկները պարապում ելին՝ վորը վոր-
սորդությամբ, վորն անտառափայտի լաստառքումով, վո-
րը ձկնորսությամբ: Գյուղն աղքատ եր, ինչպես Չերդինսկի
լերկրի համարյա բոլոր գյուղերը և շատերը թողնում,
գնում ելին աշխատանքի վորեւ ուրիշ կողմի վրա. աղա-
մշակման արդյունաբերութուն Ուսոլում, Վիշեր գետի վը-
րայի լաստակալանները, վորտեղ անտառային արդյունա-
բերողները հսկայական բեռնանավեր ելին շինում, Կամա
գետի վրա գտնված լերկաթի գործարանները: Այն ժա-

մանակ ծերունին բոլորովին չերիտասարդ եր, իսկ գլու-
ղում նրան ասում ելին Յելեակո—Շիշմար: Ամբողջ ըն-
տանիքը Շիշմարի չեր կոչվում:

Հայրը վորսորդությամբ եր պարապում և Յելեակոն
դեռ փոքրիկ տղա չեր, վոր նրա հետ անցավ ամբողջ Կոլ-
վան: Նրանք խփում ելին և աքար, և սկյուռ, և կուզ, և մա-
րար, և արջ—ինչ պատահեր: Տնից հեռանում ելին յերկու-
լերեք շաբաթով:

Հետո Յելեակոն մեծացավ, ամուսնացավ և ապրեց իր
տնով Չալպանում, իսկ ինքն առաջվա պես պարապում
եր վորսորդությամբ: Կամաց-կամաց ամբողջ ընտանիքն
սկսեց մեծանալ—յերկու տղա, մի աղջիկ. փառավոր չե-
րեխաները մեծացան և նեցուկ կդառնային հորը ծերու-
թյան տարիներին: Բայց խուլերայի տարին Յելեակոյի ըն-
տանիքը կոտորվեց... Այդ դժբախտությունը պատահեց
աշնանը, չերբ նա ուրիշ վորսորդների արտելի հետ սա-
րերը գնաց՝ մարալի: Նա գնաց վորպես ընտանիքավոր
մարդ, իսկ վերադարձավ՝ չոր գլուխ, ընտանեզուրկ: Այն
ժամանակ Չալպանում ժողովրդի կեսը կոտորվեց: Խուլե-
րան Կոլվա անցավ Կամայից, ուր լաստառաքման ելին
գնում Չալպանի գլուղացիները: Նրանք իրենց հետ բերին
սարսափելի հիվանդությունը, վորը մարդկանց հնձում
եր խոտի պես:

Յերկար ժամանակ վշտացավ Յելեակոն, բայց յերկ-
րորդ անգամ չամուսնացավ: Յերկրորդ ընտանիք կազմելն
ուշ եր: Նա այդպես ել չորգլուխ մնաց և առաջվանից ա-
վելի թունդ զբաղվեց վորսորդությամբ: Անտառում ուրախ
եր, մեկ ել վոր Յելեակոն արդեն շատ եր ընտելացել այդ
տեսակ կյանքին:

Սակայն, այստեղ ել նրան մեծ դժբաղդություն պա-
տահեց: Նա պատեց արջի վորջի շուրջը, լավ գազանին դի-
տեց և արդեն առաջուց հաշվեց, վոր Ձերդենում արջի մոր-

թու համար կստանա ամբողջ հինգ ուսուրի: Առաջին ան-
գամը չեր, վոր նա արջի վրա չեր գնում տեղով և դանակով,
բայց այս անգամ վատ չեղավ: Յելեակոյի մի վոտքը սալ-
թաքեց և արջը նստեց նրա վրա: Կատաղած գազանը ջար-
դեց վորսորդին մահամերձ, իսկ նրա դեմքը թաթի մի հար-
վածով ծռեց մի կողմի վրա: Յելեակոն անտառից սողա-
լով հազիվ տուն ընկավ, և այստեղ իր հեքիմը բժշկում
եր նրան ամբողջ կես տարի: Կենդանի մնաց, բայց ալ-
լանդակվեց: Ձեր կարողանում հեռու անտառ գնալ առաջ-
վա նման, չերբ դահուկներով քշում եր յերկամյա յեղջերուին
յոթանասուն վերստ, չեր կարողանում արդյունք ստա-
նալ ուրիշ վորսորդների չափ. մի խոսքով՝ անդառնալի
դժբախտություն եր յեկել: Յելեակոն իրենց գլուղում անե-
լու բան չուներ: Մարդկային վողորմածությամբ կերա-
կրվել չեր ուզում, և նա ուղևորվեց Ձերդեն քաղաքը, ծա-
նոթ վաճառականների մոտ, վորոնց առաջներում վաճա-
ռում եր իր վորսորդական ավարը: Կարող ե պատահել,
վոր հարուստ վաճառականները վորեւ տեղ գտնեն Յելեա-
կոյի համար:

— Կոլվայից Պեչորա տանող չորուղում յեղեկես, հարց-
րին նրան արդյունաբերողները. — այնտեղ Ստուդյոնայա
դետի վրա ձմեռանոց կա. այ, դու կարող ես այնտեղ պա-
հա կ լինել: Ամբողջ աշխատանքն այս ե միայն՝ ձմեռը դի-
մավորել և ճանապարհ դնել գումակը, իսկ նրանից հետո
զբոսնիր քեզ համար ամբողջ տարին: Ուտելիք կտանք մենք
քեզ, հագուստ ել և ամեն տեսակ պաշար վորսի համար—
ձմեռանոցի մոտերքում կարող ես զբաղվել:

— Շատ ե հեռու, ձերդ հարգարժանություն, — կմկմաց
Յելեակոն: — Դե, ձմեռանոցից չորս կողմը, հարյուր վերստի
վրա, բնակություն չկա, իսկ ամառն այնտեղ չես կարող
գնալ:

— Այդ ել արդեն քո դործն ե, ընտրիր վորն ուզում
ես. տանը քաղցած նստել՝ թե ձմեռանոցում աղավարի
ապրել:

Յեղիսկոն մտածեց և համաձայնեց, իսկ վաճառականները նրան ուղարկեցին և ուտելիք և հագուստ,—միայն մի տարի:

Հետո Յեղիսկոն ամեն ինչ պիտի գներ իր փողով, իր վորսորդութունից և ձկնորսութունից՝ ձմեռանոցում: Այդպես ել ապրում էր նա անտառում: Տարին անցնում էր տարվա հետևից: Յեղիսկոն ծերացավ, մի բանից էր վախենում միայն, վոր մահվան ժամը կգա և մեկը չի լինի, վոր նրան թաղի:

II

Մինչև գումակի գալը, քանի դեռ գետերը չեղին սառել, ծերունուն հաջողվեց մի քանի անգամ վորսի գնալ: Անտառի աքարը վաղուց էր մեծացել, բայց նրան չարժեք խփել, վորովհետև, մեկ է, կհոտի տաքութունից: Գումակի գործակատարը միշտ առանձին բավականությամբ էր աքարներ գնում ծերունուց, վորովհետև այդ կողմերից դիմացկուն և սպիտակ աքար էր գալիս, վոր յերկար ժամանակ չեր փշանում, իսկ այդ ամենից կարևորն է, վորովհետև Ստուդյոնայում սպնված աքարները մինչև Փարիզ ելին հասնում: Վաճառականները գնում ելին նրանց Չերդինում, բայց հետո ուղարկում ելին Մոսկվա, իսկ Մոսկվայից աքարներն ահագին քանակությամբ փոխադրում ելին արտասահման: Ծերունին իր խրճիթից քսան վերստի վրա գտնված ամեն մի ծառը ճանաչում էր և ամառվանից էր նկատում աքարներին, ուր նրանք թուխս ելին նստում, ճուտ հանում, արածում և կերակրվում: Յերբ խմբերը մեծանում ելին, նա գիտեր, թե քանի հատ են ամեն մեկում, բայց իր համար վոչ մի հատ չեր թողնում, վորովհետև աքարն ամենաթանկագին ապրանքն էր և նրա փոխարեն Յեղիսկոն ստանում էր ամենաթանկագին պաշարը՝ վառոդ և կոտորակ:

Այս ամառվա վորսը սովորականից հաջող էր, այնպես վոր ծերունին մինչև գումակի գալը, յերեսուն զույգ պատրաստեց և մի բանից էր վախենում միայն,—հանկարծ հալոցքը չընկներ: Ստուդյոնայի վրա այնպիսի հալոցք հաղվագլուտ էր պատահում, բայց կարող էր և լինել:

—Եհ, մենք քեզ հետ պաշար դրստել ենք, բացառում էր ծերունին շանը, վորի հետ միշտ խոսում էր, վորպես մարդու հետ: Յնվ քանի դեռ գումակը հացով գնում է Պեչորա, մենք մեր ուտելիքն ել կպատրաստենք... Գլխավորը՝ աղ պետք է շատ ճարել: Յեթե մենք աղ ունենանք, մինչև Չերդին մեզնից հարուստ մարդ չի լինի:

Ծերունին շարունակ աղի մասին էր խոսում. «Ախ, թե մի աղ կլիներ, ինչ կյանք, դրախտ էր, դրախտ»:

Հիմա նա ձուկը վորսում էր իր համար միայն, իսկ մնացածը չորացնում էր,—ինչ արժեք ունի այդպես չորացրած ձուկը: Բայց յեթե աղ լիներ, այն ժամանակ նա ձուկն աղը կդներ, ինչպես Պեչորայի արդյունաբերողները, նրա համար յերկու անգամ ավելի կստանար քան հիմա, բայց աղը թանկ արժեք, իսկ պաշարի համար հարկավոր էր քսան փուլթ,—այդքան ահագին փող վորսեղից ճարեր, յերբ վոր ուտելիքի և հագուստի համար հազիվ ծալրը ծալրին էր հասցնում:

Ծերունին առանձնապես ափսոսաց, յերբ ամառը Պողոս-Պետրոսի պասին մի մարալ սպանեց: Թարմ միսը շուտ է փշանում,—մարալի միսը յերկու որ կուտի, իսկ հետո դեն կշարտի: Մարալի չորացրած միսը վոնց վոր փայտը:

Ստուդյոնան ել սառեց: Լեռնային պաղ ջուրը յերկար ժամանակ չի սառում, իսկ հետո սառույցն ամեն տեղ ճաքճքոտվում է ջրի բաց մակերեսով:

Այդ աղբյուրներն են գետնից խփում: Ծերունին այժմ պաշարում է թարմ ձուկը, վորը կարելի չեր սառեցնել և

քարները նման: Ամենամեծ դժբախտութիւնն ա՛յն է, վոր ժամանակ քիչ կար: Մեկ եւէն տեսար գումակը վրա հասավ:

— Մուղգարկո, շուտով մեզ համար ուտելիք կգա: Ճիշտն ասած, ծերունու հացը սառնամանիքներից առաջ վերջացավ, և նա հաճարի ալյուրի մնացորդի հետ ծեծած չոր ձուկ եր խառնում: Միայն միս կամ ձուկ ուտել չեր կարելի: Յերեք որից հետո ա՛յնպես կզզվացնի, վոր այլևս բերանդ չես դնի: Իհարկէ, սամուկեղներն ու վողուկները ձկով են սնվում միայն. նրանք սովոր են այդ բանին, բայց ուս մարդը հաց ուտող է և նրանց պես չի կարող:

Գումակը բոլորովին անսպասելի կերպով լեկավ: Ծերունին քնած եր գիշերը, լերը սահնակները ճոճաացին և մի գոռոց լավեց.

— Ե՛յ, պապի կենդանի՛ լես, թե չե... ընդունիր հյուրերին... վաղուց է իրար չենք տեսել:


Ծերունուն ամենից շատ զարմացրեց ա՛յն, վոր Մուղգարկոն չիմացավ թանկագին, ցանկալի հյուրերի գալը: Սովորաբար նա զգում եր նրանց գալը, լերը գումակը լերկու վերստի վրա լեր լինում, բայց ետը չլսեց: Նա նույնիսկ դուրս չթռավ փողոց, վորպէսզի հաջի ձիերի վրա, ալլ ամթխածութեամբ թաղնվեց տիրոջ թախտի տակ և ձայն չհանեց:

— Մուղգարկո, դու խոմ չե՞ս մեռել.— զարմանում եր ծերունին.— քնով ընկար գումակի գալը... Ախ, լավ չի...

Շունը դուրս սողաց թախտի տակից, լիզեց նրա ձեռքը և նորից անհայտացավ: Նա ինքն իրեն մեղավոր եր զգում:

Եհ, ծերացել ես, հոտառութիւնդ կորցրել.— թախիծով նկատեց ծերունին: Զախ ականջով ել վատ է լսում:

Գումակը կազմված եր հիսուն սահնակից... Զերդենի վաճառականները առաջին ճանապարհով Պեշորայի վրա ելին ուղարկում՝ հաց, աղ, զանազան ուտելիքներ, ձկնորսական պարագաներ, իսկ ա՛յնտեղից փոխադրում ելին:



Թարմ ձուկ: Ամենաշտապ գործն այն էր, վորպէսզի Պեչո-
բայի ձուկը ուրիշներէից շուտ ձեռք բերելին.— Պեչորայի
թանկագին սեմգալի*) ժամանակն էր: Գումակը լերկու-
շաբաթում պետք է կտրեր գծվար ճանապարհը և կառա-
պանները քնում ելին միայն կերի ժամանակ, յերբ ձիերը
հանգստանում ելին: Հատկապէս շտապում ելին դարձին,
այն ժամանակ արդեն համարյա թե քնել չէր լինում:
Բայց ճանապարհը չորուղով գծվար էր, մանավանդ սարե-
րով: Զգվելի, քար-քարոտ ճանապարհ է, սահնակները
պայտած չեն, իսկ գետերով ել ամեն տեղ սառցակույտեր
են ու հեղեղած տեղեր: Այդտեղ լավ ձիեր շատ են փչա-
ցել, իսկ մարդիկ աշխատել են, ինչպէս վոչ մի տեղ. շա-
լակով սալերը բարձրացրել են սարը, ջրից հանել, դուռ
քաշել փոսերից: Միմիայն Կոլվայի կառապաններն ելին
վերցնում ալգալիսի անիծված աշխատանք, վորովհետեւ դա-
ռը կարիքն էր քշում նրանց գեպի Պեչորա: Ստուգոնա-
լի ձմեռանոցում գումակը հանգիստ էր առնում: Յերկու
ժամվա կերի փոխարեն ձիերին այտեղ հանգստացնում
եյին ամբողջ չորս ժամ: Ծերունին իջևանը տաքացնում
էր առաջուց և կառապանները ձիերին կերի մոտ թողնե-
լով փովում ելին փայտե թախտերի վրա մեռածի քնով:

Միայն յերիտառարդ գործակատարը չէր քնում, վոր
դեռ առաջին անգամն էր գնում Պեչորա: Նա նստել էր ծե-
րունու մոտ խրճիթում և զրույց էր անում:

— Պապի, մենակ չէ՞ս վախենում անտառում:

— Բայց ինչից վախենալ: Մեր սովորական գործն է:

Անտառում ենք մեծացել:

— Բա, ինչպէս չվախենալ մենակ, անտառում...

— Դե, ինձ մոտ շուն կա... Ահա յերկուսով ել որ ենք
մթնացնում: Ենա, վոր ձմեռները գալերը վրա լին տա-
լիս, նա ինձ առաջուց ասում է, թե նրանք յերբ հյուր

*) Զկան տեսակ: Ծ.Թ.

կգան: Զգում ե... փորձված ել է. ինքը խաբելով բերում
է գալերին: Նրանք ընկնում են նրա հետեից, իսկ լես
գալերին հրացանով... Շատ խելոք շուն է, միայն թե
մարդու պես չի խոսում: Յես միշտ խոսում եմ նրա հետ,
թե չե, կարող ե պատահել, վոր խոսելն ել մոռանամ:

— Այդ տեսակ շուն վորտեղից ես ճարել, պապի:

— Վաղուց է, վոր հաշվես՝ տասը տարի կլինի: Ահա
ձմեռը, եղպես, ծնունդից առաջ, եղածյամ ելի փնտրում...

— Յես մի շուն ունեյի, դեռ Կոլվայից ելի բերել:
Դեհ, վոչինչ, լավ շուն էր. գազանի վրա լել էր գնում,
թռչուն ել էր փնտրում, սկյուռ ել—ամեն բան, ինչպէս
վոր պետքն է: Մենակ գնում եմ նրա հետ անտառով և
հանկարծ, ահա ես Մուզգարկոն, ուղղակի դուրս պրծավ
ինձ վրա: Նույնիսկ վախեցրեց... Մեր ես արդունաբե-
րող շները սովորութուն չունեն, վոր անծանոթ մարդու
փոթաթվեն ինչպէս տիրոջ, բայց սա ուղղակի
մոտեցավ ինձ ու հետ քաշվեց: Տեսնում եմ, վոր բանը
կարծես թե լավ չի: Իսկ նա այնպէս խելացի նայում է
ինձ, բայց ինքը հա շարունակ հեռու լե տանում... Յեւ
ինչ ես կարծում, լեղբայր, տարավ ելի: Վորջի մեջ փշե-
րից մի դադա կար շինած, իսկ դադիցը թեթե գոլորշի
լե դուրս գալիս... Մոտենում եմ: Դագում պատկած է մի վո-
գուլ, նշանկում է հիւլանդ է և հետ է ընկել իր արտելից...
կարճ ասած մարդը մեռնում էր: Վորսի ժամանակ նա
տկարացել է. ուրիշներն ել հո նրան չեյին սպասի:
Ինձ տեսավ, ուրախացավ, իսկ ինքը հազիվ է արդեն լե-
զուն պտտում: Ամենից շատ ձեռքերով էր բացատրում:
Յեւ ահա նա ինձ որհնեց, ես շունը նվիրելով: Խեղճը
իմ առաջ ել մեռավ, իսկ լես նրան թողեցի ձյան մեջ,
ճիպտաներ վրա տվի և վրայից ել մի գերան դրի, վորպես-
զի գալերը չուտեն: Իսկ Մուզգարկոն, եղպես ել ինձ
մնաց: Գետակի անունն ել դրի շան վրա: Վոգուլի մեռած
տեղի գետակի անունը Մուզգարկո լե, դե—լես ել շանն ալդ

անունը ավի: Յեվ խելոք շուն ե... գնում ե անտառով...
նրանից հետո թեկուզ ավլիր—վոչինչ ել չես գտնի: Դու
կարծում ես թե նա այժմ չի հասկանում, վոր նրա մտքին
հնք խոսում: Ամեն բան հասկանում ե:

— Հապա ինչո՞ւ չե նա թախտի տակ պարկել:

— Ամթից, ենդուր վոր քնով ե ընկել գումակը
գալիս: Ծերացել ե: Յերկու անգամ ինձ աղատել ե արջից.
արջը հասնում եր ինձ, իսկ Մուզգարկոն նրան կանգնե-
ցրեց: Առաջ չես տեղով ելի գնում արջի վրա, չերբ դեռ
ուժս տեղն եր. իսկ չերբ արջն ինձ սարքեց, չես ել
արդեն հրացանով եմ տապալում նրան: Նրան ել պետք
ե սամթով բռնացնել: Խելացի գազան ե:

— Ե, հապա ձմեռն ինչ անես, տխուր ե խրճիթում
նստել:

— Սովորական բան ե... աչ, տոներին ինչ եմ ասել
տխուր ե:

Հավ տղա չե աչգ գործակատարը, աջնպես ջահել,
ամեն ինչ ուզում ե իմանալ: Յելեսկոն ուրախացավ
կենդանի մարդ տեսնելով և շարունակ պատմում եր իր
միայնակ կյանքի մասին՝ անտառում:

— Ինձ համար գարնանը տոն ե լինում սիրելիս, չերբ
տաք ծովի կողմից թռչունը գալիս ե: Յեվ ինչքան եմ
գալիս. տմալի պես... Ստուգչոնայի չերեսը վոնց վոր
նրանցով վրած լինի... Ամեն տեսակ թռչուններ ել կան
և բազեր, և սագեր, և կտցարներ, և ձալեր, և սուգահավեր...
Ծեղին գնում ես, Ստուգչոնայի վրա ինչ անքոց ե ընկել: Յեվ
չվող թռչունից ավելի լավ արարած չկա. հազար վերս-
տից ավել ե թռչում. նույնպես հոգնում ե, լղարում և ու-
րախ ե տեղի համար: Յեկավ թե չե, մի որ հանգստա-
րում ե և իսկույն բռն ե սարքում: Իսկ չես գնում եմ
և նայում... Յեվ ինչպես եմ խոսում... լսում ես, լսում,
մեկ ել արտասվում: Սիրելի արարած ե չվող թռչունը, չես

նրան չեմ դիպչում... իսկ չե՞րբ նա բռն ե շինում...
Մարդն աջնպես չի շինի: Իսկ հետո մայրերն իրենց ճուտե-
րով եմ լողում Ստուգչոնայի վրա, գեղեցիկ ե, ուրախա-
լի: Լողում եմ, չփչիացնում, կղկղում... Անապառ ե այս-
տեղի չվող թռչունը: Ամբողջ ամառը տոնի պես ե գլոր-
վում, իսկ աշնան դեմ թռչունն սկսում ե չերաֆեր կազ-
մել. ժամանակ ե նորից ճանապարհ ընկնել: Յեվ հավաք-
վում եմ մարդկանց նման... քչփչում եմ իրենց լեզվով,
դես-դեն եմ ընկնում, ջահելներին սովորեցնում եմ և հետո
բարձրանում... Վաղ առավոտյան վեր եմ կենում տեղից,
առաջնորդը գնում ե առաջից: Բայց կան և աջնպիսիներ-
ըր վորոնք մնում եմ. վատառողջ եմ դուրս գալիս, կամ
ուշ եմ ծնվում... ցավալի չե նրանց նայել. ճչում եմ խեղճե-
րը, չերբ նրանց մոտով չերամ չերամի հետևից թռչում ե:
Ստուգչոնայի վրա չես քաշ գալիս շարունակ... Լողում
եմ, լողում, մինչև գետի չեզրերը սառում եմ, հետո սառցա-
բացերում եմ պտտվում... Են, դրանց արդեն չես խղճա-
հարուլթչունից եմ ստանում: Ինչու չարչարվի, մեկ ե կատա-
կի... Ինձ մոտ աչտեղ, ճահիճում կարապներն եմ բռն
հյուսում: Ամեն արարած իր անելիքն ունի և իր վախճանը:
Ինձ մի բան ե պակաս միայն հարազատս. ես քանի տարի չե
խնդրում եմ կառապաններին, վոր ինձ համար մի աքա-
ղաղ բերեն... Չմեռը գիշերները չերկար եմ, վերջ չու-
նեն, իսկ աքաղաղն ել կասեր թե ժամի քանիսն ե դուրսը:

— Պապի, հետեվյալ անգամ չես քեզ համար մի շատ
ձախեղ աքաղաղ կբերեմ, սարկավագի պես գոռացող:

— Ախ, սիրելիս, աչ թե կհարգես ծերուկիս... Մենք
երեքով ինչքան լավ կապրենք: Տխուր ե, չերբ ձմեռները մե-
ռած լուռթյուն ե տիրում, բայց աքաղաղն աչտեղ մեկ ել
տեսար ուրախացրեց: Աքաղաղն ել հասարակ արարած չի,
դրա նման մի ուրիշը չկա, վոր ժամերն ասի: Աքաղաղը
մարդու կարիքի համար ե ստեղծված:

Գործակատարի անունը Ֆլեգոնդ եր: Ծերունի Յելես-

կողի համար նա թողեց և՛ ալյուր, և՛ աղ, և՛ նոր շապիկ, և՛ վառոդ: Իսկ Պեչորայից վերադառնալիս ընծա բերեց:

— Պապի, լես քեզ համար ժամացույց եմ բերել. ա-սաց նա ուսի՝ մեկնելով տոպրակին աքաղաղի հետ:

— Ախ բարեբարս, ախ, հարազատս... բա վճնց շնորհակալ լինեմ քեզնից: Ե, թող աստված տա քեզ այն ամե-նը, ինչ վոր ինքդ ես ուզում: Յերևի մի տեղ հարսնացու-լես ջոկել, ցանկանում եմ սեր և հաշտություն...

— Եղպես մի մեղք կա, պապի,— ուրախ պատաս-խանեց Ֆլեգոնդը, թափ տալով իր շեկ գանգուրները: Չերդինում լերկու փայլուն աչքեր կան. նրանք նայե-ցին ինձ և կախարդեցին... Ե, աստված քեզ հետ:

— Քո հարսնացուի համար մի հատ սամուլը կպատ-րաստեմ լեկող աշուն, լերը նորից Պեչորա կգնաս: Մե-կը նշան եմ արել:

Գուժակը վերադարձավ և ծերունին մնաց աքաղաղի հետ: Վորքան ուրախություն... Աքաղաղը խալտաբղետ ե, կատարը կարմիր. խրճիթում ման գալիս ամեն մի փե-տուրը խաղում ե: Իսկ զիշերը վոր չի գոռում... Այ քեզ ուրախություն և մխիթարություն: Հիմա ամեն առավոտ Յերևակոն սկսեց խոսել իր աքաղաղի հետ և Մուզգարկոն լսում ե նրանց:

— Ինչ ե, նախանձում ես, քավթառ, տնազ ե անում Յերևակոն շանը:— Քու արհեստդ մենակ հաջալն ե... Հապա դու մի աքաղաղի պես լերգիր...

Ծերունին նկատեց, վոր կարծես թե տխրեց Մուզ-գարկոն: Գլուխը կախ ե ման գալիս... Շունը ինչ վոր տկար ե: Վայ թե կառապաններն են աչքով տվել:

— Մուզգարուշկո, այդ ինչ ե պատահել քեզ, վորտեղդ ե ցավում:

Մուզգարկոն պառկել ե թախտի տակ, գլուխը թա-թերի արանքում և միայն աչքերն ե թարթում:

Ծերունին անհանգստացավ, անսպասելի դժբախտու-

թյուն վրա հասավ: Իսկ Մուզգարկոն միշտ պառկած ե— չի ուտում, չի խմում, ձայն ել չի հանում:

— Մուզգարուշկո, սիրելիս...

Մուզգարկոն պոչը շարժելով սողաց տիրոջ մոտ, լի-դեց նրա ձեռքը և մեղմորեն վռնաց...

— Ախ, բանը վատ ե...

III

Քամին փչում ե Ստուդյոնայի վրայով, ձյունի սափե-նանոց կույտեր ե կիտում, վռնում ե անտառում քաղցած գալլի պես, իսկ Յերևակոյի խրճիթն ամբողջապես խեղդ-վել ե ձյան մեջ: Մի կիսատ-պռատ ծխելույզ ե ցցված և նրա միջից վոլորվելով դուրս ե գալիս ծխի կապույտ հոսանքը:

Արդեն լերկու շաբաթ ե, ինչ վռնում ե թիփին: Յերկու շաբաթ ե ծերունին դուրս չի գալիս խրճիթից և շարունակ հիվանդ շան հետ ե: Իսկ Մուզգարկոն պառ-կած ե և հազիվ ե շնչում: Մուզգարկոյի մահը լեկավ...

— Իմ բարեբար... լալիս ե ծերունին և համբուրում հավատարիմ բարեկամին.— Իմ հարազատ վորտեղդ ե ցա-վում:

Մուզգարկոն ինչպես առաջ, վոչինչ չի պատասխա-նում. նա վաղուց ե զգացել իր մահը և լուռ ե... Լալիս, իրեն սպանում ե ծերունին, բաց վոչնչով չի կարող ող-նել, մահվան դեմ ճար չկա: Ախ, ինչպիսի շար մահ վրա հասավ:

Ծերունու վերջին հույսը մեռավ Մուզգարկոյի հետ, և նրա համար վոչինչ, վոչինչ չմնաց բացի մահից: Հի-մա ո՞վ պիտի սկսու փնտռի, ո՞վ կհանի խլահավին հաջե-լով, ո՞վ կբռնի մարալի հետքը: Առանց Մուզգարկոյի մահ ե, սարսափելի սովամահություն: Հացի պաշարը հազիվ բա-վականացնի մինչև մկրտություն, իսկ նրանից հետո՝ մահ...

Վռնում ե թիփին, իսկ ծերունին հիշում ե, թե

ինչպես եր ապրում ինքը Մուղղարկոյի հետ, ինչպես եր վորսի գնում և իր համար վորս ճարում: Առանց շան ինչի լե պետք նա: Մշուս կողմից ել գալիները... զգացին զժբախտութեանը, խրճիթի մոտ լեկան և վռնացին: Ամբողջ գիշերն այնպես ելին վռնում, վոր սիրտ եր կտրատում: Ել նրանց վախեցնող չկա: Հաջել, զբաղել կրակոցի...

Ծերունին հիշեց մի դեպք, թե ինչպես նեղացնում եր իրեն շատուն արջը: — Շատուն կոչվում են այն արջերը, վորոնք աշնանից ժամանակին չեն պառկում վորջում և թափառում են անտառում: — Այդ տեսակ շատունն ամենամատանգավոր գազանն է... Ահա և սովորեց արջը խրճիթին, առնելով ծերունու պաշարների հոտը: Գիշերն ընկնում է թե չե, գալիս է: Յերկուսանգամ կտուրը մագլցեց, և թաթերով հետ տվեց ձյունը: Հետո կրնկահան արեց իջևանի դուռը և ծերունու ձկան պաշարից մի ամբողջ կուլտ փախցրեց:

— Շատունը Յելեսկոյին այնքան չարչարեց, վոր չափը կորավ: Ծերունին չարացավ նրա վրա անզգամութեան համար, հրացանը լցրեց գնդակով և դուրս լեկավ Մուղղարկոյի հետ: Արջը հարձակվեց ծերունու վրա, և հավանորեն կճխեր նրան իր տակ, մինչև նրա կրակելը, բայց Մուղղարկոն ազատեց: Նա բռնեց գազանի հետևից և նստեցրեց, իսկ Յելեսկոյի գնդակը վրիպել չգիտեր... Միթե քիչ դեպքեր են լեղել՝ լերը շունն ազատել է ծերունուն...

Մուղղարկոն սատկեց հենց ծննդից առաջ, լերը սառնամանիքը ճռճում եր անտառում: Այդ բանը գիշերը պատահեց: Յելեսկոն պառկած եր թախտի վրա և ննջում եր: Հանկարծ, կարծես թե մի բան ծակեց նրան: Նա վեր կացավ, վառեց մարխը, մոտեցավ շանը: Մուղղարկոն սառկած պառկած եր: Յելեսկոն սառեց, այդ իր մահն եր:

— Մուղղարկո, Մուղղարկո—կրկնում եր զժբախտ

ծերունին, համբուրելով մեռած բարեկամին:— Հիմա լես ինչ պիտի անեմ առանց քեզ:

Յելեսկոն չուզեց, վոր գալիերն ուտեն Մուղղարկոյին և նրան թաղեց իջևանում: Ամբողջ լերեք ուր նա ծակում եր սառած հողը, գերեզման շինեց և արտասուքով թաղեց նրա մեջ հավատարիմ բարեկամին...

Մենակ աքաղաղը մնաց, վորն առաջվա նման գիշերը զարթեցնում եր ծերունուն: Յելեսկոն զարթնում է և իսկույն հիշում Մուղղարկոյին: Յեվ նրան մահվան չափ դառն ու զզվելի լե դառնում ամեն բան: Մեկը չկա, վոր հետը խոսի: Իհարկե վոր աքաղաղը հետաքրքիր թրուշուն է, բայց և այնպես թռչուն է և վռչինչ չի հասկանում:

Ախ, Մուղղարկո,—կրկնում է Յելեսկոն ուրը մի քանի անգամ, զգալով թե ինչպես ամեն ինչ սկսում է դուրս թափել նրա ձեռքերից:

Դժբախտ մարդիկ ստիպված են լինում մոռանալ իրենց վիշտն աշխատանքի մեջ: Այդպես ել այստեղ լեղավ: Հացի պաշարները վերջանում ելին և ժամանակ եր, վոր Յելեսկոն իր գլխի ճարը տեսներ: Բայց գլխավորը,—զրգվելի լեր թվում հիմա նրան իր խրճիթում մնալը:

— Եհ, կթողնեմ ամեն ինչ, կգնամ տուն, Կոլվալի վրա, գուցե և Չերգին կհասնեմ—վճռեց ծերունին:

Դահուկները նորոգեց, վորոնցով դեռ ջահել ժամանակ ընկնում եր մարախների հետևից. մաղախը պատրաստեց, հինգ ուրվա պաշար վերցրեց, մնաս բարև արավ Մուղղարկոյի գերեզմանի հետ և ճամփա ընկավ: Մեղք եր աքաղաղին թողնել մենակ, և Յելեսկոն իր հետ տարավ նրան: Ծերունին հեռացավ մինչև քարե հրվանդանը, հետ նալեց իր բնակարանին և լաց լեղավ, ախոսաց իր նրստած տաք անկյունի համար:

— Մնաս բարով, Մուղղարկո:

Դժվար ճանապարհ եր տանում ձմեռանոցից Կոլվա:



Առաջ ստիպված եր գնալ դահուկներով, Ստուգոնայի վրա-
յով: Այդ հեշտ եր, բայց հետո սկսվեցին սարերը և ծե-
րունին ուժասպառ լեզավ: Առաջ մարալի պես եր վազում
սարերում, իսկ այստեղ՝ քսան վերստի վրա ուժից ըն-
կավ: Թեկուզ պառկիր ու մեռիր... Նա ձյան մեջ խոր
փոս փորեց, փշեր փռեց, կրակ արեց, կերավ ինչ վոր

կար մաղախում և պառկեց հանգստանալու: Աքաղաղին
եւ ծածկեց մաղախով: Հոգնածությունից նա շուտով
քնեց: Վորքան եր քնել նա, շատ թե քիչ, միայն թե
դարձնեց աքաղաղի կանչից...

— Գալլերը.— անցավ նրա մտքով:

Նա ուզում եր վեր կենալ և չի կարողանում, կար-
ծես թե մեկը կապել ե նրան թռկով: Նույնիսկ աչքերը
չի կարողանում բաց անել... Աքաղաղը մի անգամ եւ
կանչեց և լռեց. նրան մաղախի հետ միասին փոսից
դուրս քաշեց գալլը: Ծերունին ուզում ե վեր կենալ,
սարսափելի ջանք ե թափում և հանկարծ ծանոթ հաջոց
ե լսում կարծես ինչ վոր տեղ, գեանի տակ Մուզգարկոն
հաջեց: Այո, այդ նա լե... Մոտենում ե, մոտենում ե, այդ
նա լե, հետքը բռնած գալլիս ե ստորին հոտառությամբ:
Ահա, արդեն բոլորովին մոտ ե, հենց փոսի առաջ: Յե-
լեսկոն բաց արեց աչքերը և տեսնում ե, իսկապես,
Մուզգարկոն ե, իսկ Մուզգարկոյի հետ հենց այն վողուլն
ե— նրա առաջին տերը, վորին ինքը թաղեց ձյան մեջ:

— Դու այստեղ ես պապի, հարցնում ե վողուլը, իսկ
ինքը ծիծաղում ե: Յես քո հետևից եմ լեկել...


Մառը քամին փչեց, պոկեց ձյան շերտերը բարձր
լեղենիներից և պիտաններից և թափեց մեռած Յելեսկո-
յի վրա: Առավոտյան նրա փոսից հետք եւ չեր մնացել:

1892 թ.

Շալալիա գյուղը խցկվել էր անտառային սարսափելի խուլ տեղում, Չուսովոյ գետի բարձր ափին: Մայլի ճանապարհը վերջանում էր Շալալիայում, իսկ նրանցից դեմք գնալու տեղ ել չկար:

Շալալիան հեռվից շատ եր գեղեցիկ, մանավանդ, չերբ գետի կողմից մարդ նայեր, — խրճիթները կանգնած ելին արևի հենց դիմաց, ինչպես ամուր ատամներ և ինչպիսի խրճիթներ ելին՝ մեկը մյուսից լավը, — փառք եր, վոր անտառը մոտիկ եր և թիկանցում եր գլուղակը կանաչ ատամնալոր պատով: Ցանքսերը շատ քիչ ելին, վորովհետև շալալիացիք գլխավորապես պարապում ելին փայտամշակությամբ: մեկ ել վոր՝ սարերում ցուրտ ամառներ են լինում և հողը վատ բերք ե տալիս: Այ, խոտը հարկավոր ե, և այն հնձում ելին անտառային ընդարձակ բացատներում կամ Չուսովոյ գետի հրվանդաններում և ծոցերի ափերին: Շալալիայի բոլոր տները հաշվով քսանյոթն ելին, և շալալիացիք բոլորը բարեկամական հարաբերություններով կապված մի անագին ընտանիք ելին կազմում:

Պիմկայի խրճիթը կանգնած եր հենց բաշին, այսինքն համարյա փոսի գլխին: Ամառը լուսամուտներից կարելի չեր տեսնել Չուսովոյ գետի հորդացումը հինգ կիլոմետր տարածության վրա: Գետի մյուս կողմն անմիջապես ընկած եր անծայր անտառը, և Շալալիայում վոչ վոր չգիտե՞ր՝ թե վորտեղ ե վերջանում այն, կարծես թե գլուղը



գտնվում եր աշխարհի ծայրին: Պիմկան ութերորդ տարին եր մտել և նա վոչ մի տեղ չեր լեղել և վոչինչ չեր տեսել, բացի իրենց գլուղից: Շալալիացիները բոլորն ել սիրում ելին իրենց գլուղը: Երբ չերիտասարդները գինվորության ելին գնում, նրանք հարազատ բնից բաժանվում ելին արցունքով: Պիմկան հիշում եր, թե ինչպես գինվորության ճանապարհ դրին իր մեծ լեղբորը՝ Յեֆիմին և ուրիշ չերիտասարդներին, և վոր ինքն ել նույնպես բոլորի հետ լալիս եր բարձրաձայն:

— Դադարեցեք, դուք, հիմարներ: Համոզում ե պաշտոնաթող գինվոր քեռի Ակինտիչը: — Ի՞նչի համար եք լալիս, չալերի հետ չափտի ապրի, այլ բարի մարդկանց հետ, համենայն դեպս ամեն բան կտեսնի, վոնց են ուրիշ-

ներն ապրում, և մարդկանց փորձով ինքն ել մի բան կսովորի: Շալաչկալում—հո ամբողջ կյանքն անտառում կանցկացնի... դա մեծ ուրախութունն չի:

Զինվոր Ակինտիչին վոչ վոք չհամատաց: Սոսեր լավ ե, չերբ ինքն իր ծառայութունը վերջացրել—պրծել ե: Յեթե ոտար տեղում այդքան քաղցր լիներ, ել ինչո՞ւ զինվորը նորից իրենց տուն—Շալաչկա վերադարձավ: Ակինտիչն ապրում եր Պիմկաչի հոր մոտ, վորովհետև իր ընտանիքը վոնց չեղավ՝ ցրվեց: Ծերունիները մեռան, քույրերը մարդու գնացին, իսկ ամուսնացած լեղբայրների հետ զինվորը լուր չեր գնում:

Պիմկան շատ եր սիրում Ակինտիչին, վորն աչքան լավ պատմութուններ եր անում և բացարձակապես ամեն ինչ գիտեր, մինչև անգամ Ակուլինա տատից ել լավ եր պատմում, վորը միայն հեքյաթներ գիտեր, մեկ ել «հինհին բաների մասին»: Յերբ լեղբայրը—Յեֆիմը զինվոր գնաց, Ակինտիչը բռնեց նրա տեղը: Զնայած վոր ընտանիքը մեծ եր, բայց իսկական աշխատավորներ մնացել էին ընդամենը յերկու հոգի—հայրը՝ Յեգորը, մեկ ել յերկրորդ լեղբայրը՝ Անդրեյը: Պապն ել կար Տիտը, միայն թե նա արդեն աշխատանքի չեր կարող գնալ, վորովհետև անտառումն եր ապրում և քիչ եր տուն գալիս: Կինարմատները հաշվի չեյին: Մայրը—Ավդոտյան տունն եր կառավարում, իսկ մեծ քույրը—Դոմնան «խելքը պակաս եր»:

Այդ Դոմնայի հետ մի այսպիսի դեպք պատահեց: Ամառը կինարմատներն աղնվամորենու էին գնացել, հին Մատյուզին կոչված ածխափուռը. Դոմնան ել նրանց հետ եր: Նա դեռ դեռատի յեր և վոնց լեղավ խմբից կորավեց: Հետո ամբողջ յերեք ուր վողջ գլուղով անտառում փնտռեցին և նույնպես չգտան: Այնպես ել վճռեցին, վոր Դոմնային արջը պատառոտել ե: Հինգերորդ ուրն արդեն նրան գտավ Տիտ պապը. Դոմնան բարձրացել ե սոճիի վրա,

մեխվել—փաթաթվել եր և ձայն չեր հանում: Ծերունուն հաջողվեց պոկել նրան ծառից և հազիվ կենդանի տուն բերեց:

Այդ ժամանակվանից ել Դոմնան «խելքը պակաս մնաց: Շարունակ լուռն ե, ինչ ել վոր չեն ասում նրան: Աշխատեն աշխատում եր, յերբ վոր ստիպում եր մայրը, իսկ աչքպես,—վոնց վոր փոքրիկ յերեխա: Գլուղի յերեխաները սիրում էին ծաղրել նրան: Սմբով շրջապատում են ու գոռում:

— Դոմնա, ցույց տուր թե անտառադեղ վոնց ե ման գալիս:

Բավական ե այսքան ասել, յերբ Դոմնան սկսում եր վայրենաբար ծիծաղել, աչքերը չուում եր և շատ սարսափելի դառնում:

Բացի Դոմնայից ել յերեխաներ կային, բայց նրանք շատ էլին փոքրիկ և վոչ մի հաշվի տակ չեյին մտնում:

Ամբողջ Շալաչկան փայտամշակության աշխատանքով եր պարապում, նմանապես և Պիմկաչի ընտանիքը: Նույնիսկ Տիտ պապն ել աշխատում եր ածխափուռում և նրան Պիմկաչի հայր Յեգորն եր ընդունել աշխատանքի: Ուրիշները փայտ էին կտրում, անտառափայտը կրում էին գեպի Զուսովոյ գետը, վորտեղ լաստեր էին հյուսվում, գերանները լաստառքում էին ստորին նավահանգիստները: Հեշտ աշխատանք չեր, բայց բոլորն ել սովորել էին նրան և ուրիշ ավելի լավ բան չեյին ցանկանում: Պիմկան ել գիտեր, վոր ածխափուռում պիտի աշխատի և հաճախ ասում եր հորը:

— Ապի, բա յերբ պիտի դու ինձ ածխափուռ տանես:

— Համբերիր Պիմկա, քու ժամանակը դեռ առաջիկ ե. ածխափուռում աշխատելու յել կհասնես, սպասիր...

Յեվ Պիմկան սպասում եր: Նրան թվում եր, թե հենց վոր ածխափուռ գնա, իսկույն կմեծանա: Մինչև ածխա-



վուռ չերեսուն կիրոմետր ելին հաշվում, և աչնտեղ գնալ կարելի չեր միայն ձմեռվա ճանապարհներով: Տիտ պապը մեկ-մեկ ամառն ել եր մնում աչնտեղ:

Վոչ վոք Շալաչկա չեր գալիս, համ ել նրանից դենը գնալու տեղ չկար:

«Ոտարերկրյա» մարդկանցից չերբեմնակի չերևում ելին միայն ածխափոփերի կապալառուները, մեկ ել վորսորդները, վորոնք ուշ աշնանը աքարներ և սկյուռներ ելին վորսում: Զինվոր Ակինտիչն ել եր վորսորդութուն անում ազատ ժամանակ և մտերմութուն ուներ բոլոր վորսորդների հետ: Նրանք ել իջևանում ելին հենց Յեգորի խրճիթում:

Պիմկան տախտակամածում պառկած սիրում եր լսել վորսորդական զրույցներ, մանավանդ չերբ խոսքը ծուռ թաթ Միշկայի (արջի) մասին եր լինում:

Տիտ պապը մի քանի տասնյակ արջեր եր սպանել, բայց չեր սիրում այդ մասին խոսել: Նա բոլորովին թողեց վորս անելը, չերբ արջն աչնպես կոխրճեց նրա վոտքերը, վոր պապը կաղ մնաց ամբողջ կյանքում:

Շալաչկայում ամենաուրախ ժամանակը դարնանն եր չերբ վերելից Զուսովոյ գետով քարվան եր անցնում: Գար նանային լիքը շուրը չորս մետրի չափ բարձրանում եր գետում և նրա վրայով արագ թռչում ելին հարյուրավոր բարկաներ: Ամբողջ գյուղը դուրս եր թափվում ափը նալելու: Պիմկան ել եր նայում և մտածում եր աչն մասին, թե ուր են լողում բարկաները և ինչ մարդիկ են գնում նրանցով: Ամբողջ գյուղից միայն Ակինտիչն եր լողում բարկայի վրա և զանազան հետաքրքիր բաներ եր պատմում աչն մասին, թե վորպիսի կատաղությամբ ե խաղում գետը քարերի մեջ: Ինչպես են բարկաները խփում ժայռերին, ինչպես ե խեղդվում ժողովուրդը: Ակինտիչը բացարձակապես ամեն ինչ գիտեր աշխարհում և ինչ վոր զարմանալի տեղերի անուններ եր տալիս, վորտեղ քշում են բոլոր բարկաները:

— Աչնտեղ, չեղբայր, հարուստ ժողովուրդ ե ապրում,—բացատրում եր նա Պիմկային.—Յեվ ամեն բան առնում են, ինչ ել վոր բերեն... Յեվ անտառանյութ, և չերկաթ, և պղինձ, և սկյուռ, և աքար—միայն հասցրու:

Տներն աչնտեղ քարից են, իսկ գետի վրա շոգենավեր են վազում:

II

Պիմկան տասնըմեկերորդ տարվա մեջ եր, չերբ հայրն ապաց.

—Դեհ, Պիմկա, պատրաստվիր ածխափուռ գնալու:

Ժամանակն է, յողբալը, վոր դու լել գեղջուկ դառնաս: Այդ ձմեռվա սկիզբն էր, յերբ ձմեռային ճանապարհը բացվեց: Պիմկան ուրախ էր, բայց դրա հետ միասին քիչ վախե- նում էր: Ածխափուռն արջեր կային: Նա վոչինչ չստաց իր վախի մասին՝ վորովհետև իսկական գեղջուկները վո- չնչից չեյին վախենում: Ապագա գեղջուկի համար մայրը ամառվանից ամբողջ անհրաժեշտ հագուստը պատրաստել էր. կարճիկ կիսամուշտակ՝ տանու վոչխարի մորթուց, շան մորթուց քուրք, թաղիքե վոտնամաններ (պրիմա- ներ), շան մորթուց ձեռնոցներ, նույնպիսի յեռանկյուն գլխարկ, փափախ, ամեն բան, ինչ վոր պետք է իսկա- կան գեղջուկին: Ձմեռը սարսափելի սառնամանիքներ ե- լին լինում յերկու շաբաթ, յերբ թռչունը սառում էր թռ- չելիս և փրկողը միայն շան տաք մորթին էր: Առանձնապես տուժում էին ածխակիրները, վորոնք ածուխը կրում էին Բորովսկոյե գործարանը: Շատ քիչ մարդ չէր սառցնում այտերը և քիթը: Մայրը խղճում էր Պիմկային և ճանապարհ գնելիս լաց լեղավ:

— Տես Պիմկա, չմրսես: Հյուղի մեջ պիտի ապրես, իսկ այնտեղ գիտե՞ս ինչ տեսակ ցուրտ է:

— Վոչինչ մայրիկ, — ուրախ պատասխանեց Պիմկան: — Յես Ակինտիչի հետ կապրեմ, իսկ նա ամեն բան գիտի... Մենք գեռ նրա հետ արջ ել կսպանենք...

— Լավ, աչ, ականջներդ չսառցնես:

Մենք նրան կոհաջուր կդարձնենք, — բացատրեց հալ- րը. — ինչի համար նա տանը զուր տեղը դես-դեն ընկնի, բայց այնտեղ գործ կանի: Հո չես կարող կառվին ստի- պես, վոր քաշովի լեփի... Այդպես չի, Պիմկա: Պապդ քեզ համար կուրախանա... Ծերունին ու փոքրը: Յեվ կապրեք հյուղում:

— Ապի, յես վոչնչից չեմ վախենում:

— Բայց ինչից վախենալ: Մարդկանց հետ պետք է ապրես: Պիմկային սաստիկ դուր լեկավ ածխափուռ տա-

նող ճանապարհը, վոր շարունակ գնում էր անտառի մի- ջով: Ձյունը հենց նոր էր լեկել և ճահիճները դեռևս չեյին սառել վոնց վոր պետք էր: Գնում էին ածուխի մեծ կողովի մեջ նստած, վոր Տիտ պապը գործել էր թխե- նու ձյուղերից: Ծերունին ամբողջ ամառը մնաց անտառում և կեչի փայտից սահնակների, աղեղների համար կեռեր էր վորորում և կողովներ հյուսում: Նա ամեն բան կարողա- նում էր անել, ինչ վոր հարկավոր էր ածխափուռ աշխա- տանքի և տնային պիտույքների համար: Գեղջուկների հա- մար կացնի կոթեր էր շինում, կանանց համար տաշտեր, դռնակներ, ամենը — ինչ վոր հարկավոր է: Անտառը դեռ նոր-նոր էր պատել առաջին ձյունով: Խիտ լեղևները կանգնած էին պատի նման, ինչպես դորք: Հին ածխա- փուռերի տեղը ջահել կեչիներ և կաղամախներ էին դուրս լեկել: Ձմեռը նրանք այնպիսի մերկ տեսք ունեյին: Հայրը վարում էր ձին և ժամանակ առ ժամանակ Պիմկային ա- սում:

— Տես, հրեն — նապաստակի հետքը... Տեսնո՞ւմ ես, ինչ հանգուցյներ է արել ձյան վրա... Ախ, խորամանկ... Այն- պիսի նախշեր կգործի վոր չես կարող արձակել: Այ, հրեն, աղվեսն է անցել... նա վոնց վոր խանում, գնում է, իր հետքը պոչով ավլում:

Մի տեղ Յեգորը ձին կանգնեցրեց, լերկար գննեց հետքը և բացատրեց.

— Գալլի վոհմակ է անցել... նրանք, յողբալը, զին- վորի պես քալլը քալլի տեղն են դնում: Վոհմակն ան- ցել է, բայց հետքը վոնց վոր մեկինը լինի... Մեր ան- տառային գալլը սարսափելի չի, վորովհետև անտառում ամեն տեղ նրա համար կերակուր կա. նապաստակ են բո- նում, աքարներ են ուտում, պատահում է, վոր ամբողջ խլահավ են ձեռք բերում: Խեղացի դադան է:

Մի ուրիշ տեղ Յեգորը Պիմկային ցույց տվեց մի մեծ

հետք: Նորեկ ձյան վրա դրոշմվել են ինչպես կովի կրճ-
դակներ:

— Դա լերկամյա յեղջերու գաղանն է անց կացել: Վճնց
և սլացել: Ինչ մի տեղն էր, վոր մեր գինվորը նրան սպա-
ներ: Ամբողջ ածխափռի մարդիկ կլշտանալին, իսկ կա-
շին կծախեր գործարանում: Պետք է նրան ասել, թող հետքը
բռնի, կգտնի:

Ածխափուռ հասան արդեն գիշերը: Բոլորովին մութն
եր և Պիմկան ննջեց, կլռի նման կուշ գալով կողովի հա-
տակում: Ածխափռի տեղը կարելի չեր նկատել հեռվից
աչն ցուքից, վորը բարձրանում էր արվող «կապուկների»,
աչսինքն լերկար փայտերի լերկաչնքով դրած կուլտերի
վրա, վորոնք վերեկից ծածկված ելին կուռնձողով: Քիչ հե-
ռու, մյուս կողմում գտնվում էր չորս հատ հյուղ: Յեզորը
մոտեցավ աչն մեկին, վորի մեջ ապրում էր Տիտ պապը:

Դեռ հեռվից հյուղերին դիմավորեց մի խաչտաբղետ շուն,
Լիսկո անունով, վորը շատ ամաչեց, չեր ճանաչեց ձիուն:

Հաջոցի վրա բոլոր հյուղերից գեղջուկները լերկվացին:


— Այդ գճւ լես, Յեզոր:

— Այո, լես եմ... Ահա թե ինչպիսի գաղան եմ բե-
րել ձեզ համար: Պիմկա, դուրս արի:

Ակինտիչը դուրս թռավ հյուղից և հանեց Պիմկային,
վորը վոչ մի կերպ չեր կարողանում արթնանալ: Յերը
Ակինտիչը նրան թափահարեց, Պիմկային շատ ցուրտ թվաց:
Հյուղում նստած էր Տիտ պապը և հետևում էր քարե
ոջախի վրա դրած լերկաթե թշաացող կաթսային, վորի
մեջ կորեկի քաշովի չեր լեփվում ընթրիքի համար: Տեսնե-
լով թոռին, ծերունին ուրախացավ:

— Դե, դե, նստի՛ր հյուղը կլինես ասում էր նա: Ինչ է,
մրսել ես... Սպասի՛ր, հրես քաշովի կուտես և կաքանաս:

Հյուղն իրենից ներկայացնում էր մեծ, ցածր
խրճիթ, առանց լուսամուտների և ծխնելույզի: Հետևի



մասը բռնում ելին անընդհատ թախտեր, յեղենու հին կոճ-
ղերի վրա: Յածրիկ գոնից դեպի աջ, անկյունում մեծ
քարերից ոջախ էր շինած: Ծխնելույզի փոխարեն կուռքի
վրա սեին էր տալիս մի անցք և ծուխը փռվում էր ամ-
բողջ հյուղում, աչնպես վոր կանգնելու հնարավորու-
թյուն չկար, և Պիմկան իսկույնեթ հազաց, ծուխը կուլ
տալով: Առաստաղն ու պատերը ծածկված ելին մուրով:

Հը, դուր չեկա՞վ մեր հյուրասիրութիւնը — հանաքում եր Ակինտիչը. — բայց դու հլա հատակին նստիր Պիմկա, ալ պապի մոտ...

Ծերունի Տիտն անշափ ուրախ եր թոռան գալուն և նստացրեց նրան իր կողքին, գերանի կոճղին: Ծերունին ութսունին մոտիկ եր և նրա ալեհեր մորուքը դեղնել եր, բայց նա դեռ դիմացկուն եր, իսկ աշխատանքի մեջ համարյա հետ չեր մնում լերիտասարդ գեղջուկներից: Միայն դժբախտաբար Տիտ պապի մեջքն սկսել եր ցավել և կսկծում ելին մրսած վոտները:

Ահա քեզ, պապի, և ոգնական. — դավաճանում ելին հյուղում հալաքված գեղջուկները: — Եդ Պիմկան, գիտեք, բանը վոր քաշովուն հասնի, առաջին աշխատավորն ե:

Բոլոր փայտահատները և ածխագործները ածխավորի հյուղերի կյանքի շնորհիւ ծխնելուղ մաքրողների նման ելին: Լվացվես, չլվացվես, — միենուցն ե, ծխից ու մրից չես պաշտպանվի: Հիմա բոլորն ուրախ ելին նոր մարդու գալուն և հանաքում ելին տղայի հետ, ով ինչպես կարող եր սաղացներ: Պիմկան կատարյալ լերջանիկ եր: Գեղջուկները բոլորն ել իրենցից ելին՝ շալաչկացիներ և նա բոլորին ել ճանաչում եր մեկ-մեկ՝ դեմքով: Պիմկայի հայրը գյուղից ինչ ասես բերել իր և հիմա բաժանում եր, — վորին հաց, վորին քուրք, վորին նոր կացին, վորին ճաշի ալանք, վորին նոր շապիկ:

Պիմկան տաք քաշովին ալնալիս բավականութամբ կուշտ կերավ, վոր լերքեք չեր կերել ու տեղն ու տեղը քնեց, պապի կողքին, կոճղի վրա նստած:

Դեհ, հարկավոր ե փոքրիկին փետուրե դոշակին պառկեցնել — հանաքում եր Ակինտիչը թախտի վրա Պիմկայի համար խոտից անկողին պատրաստելով: Ահա մենք այստեղ կանաչ փետուր կփռենք, քնիր միայն:

Քնաթաթախ Պիմկային Ակինտիչը ձեռքերի վրա տեղափոխեց, պառկեցրեց թախտին և ծածկեց իր մուշտակով:

— Տեսար, լերեխի քունը վոնց տարավ. — դարմանում ելին գեղջուկները. — նա ճամբին մրսել ե, ենտեղից ել տաք տեղ ընկավ ու թուլացավ...

Գեղջուկները մեկ-մեկ ցրվեցին Տիտ պապի հյուղից: Բոլորն ել առավոտյան շուտ պիտի վեր կենային:

Հետեւյալ որն առավոտյան Պիմկան շուտ դարթեց սոսկալի ցրտից: Հյուղում տաք եր, քանի դեռ կրակը վառվում եր ոջախում: Հենց վոր կրակը հանգավ, — ամբողջ տաքութիւնը դուրս գնաց մասամբ դեպի վեր, ծխի անցքով, մասամբ վատ սարքած դռնով:

Վատն ալն եր, վոր պետք ե սպասեր, մինչև կրակը վառվեր, մոխիր դառնար և ծուխը դուրս գար. հետո արդեն Տիտ պապը բարձրանում եր կտուրը և ծխի անցքը ծածկում լեղենու կեղևով, իսկ վերեից ել փուշ եր թափում: Հյուղի մեջ կամ սոսկալի շոգ եր լինում, կամ սոսկալի ցուրտ:

Ածխափռում աշխատանքն արդեն լեռում եր, լերք Պիմկան դուրս լեկավ հյուղից: Տիտ պապը հենց հյուղի առաջ նոր քարշակ եր սարքում: Ինչ վոր տեղ, անտառում շրխկում ելին կացիները, վորոնք կտրում ելին սառած ծառը, իսկ թարմ կտրոնի վրա սաստիկ ծխում ելին տասիչափ կուլտեր: Դրանք լերկու մետրից ավել բարձրութիւն և մինչև վեց մետր լայնութիւն ունեցող կուլտեր ելին: Ներսում փայտերը դարսված ելին ցից և վառվում ելին դանդաղ կրակով, ավլի շուտ չելին վառվում, ալ դանդաղ մխում ելին անբոց: Ամբողջ դադանիքն ալն եր, վորպեսզի ծառն ամբողջովին չվառվի, ալ պինդ ածուխ ստացվի: Այդպիսի կուլտը վառվում եր լերկու շաբաթ, մինչև վոր բոլոր փայտերը ածուխ ելին դառնում:

Ամեն մի կուլտ իր խարոզն ուներ, վորն ամեն բա-



նի պիտի հետևեր: Ամբողջ աշխատանքը կկորչեր, լեթե կըրակը վորևե տեղից դուրս պըծներ կռնձղերի միջով, այն ժամանակ ամբողջ ածուխն այրվում էր: Խարողները գիշեր ցերեկ չէին հեռանում իրենց կույտերի մոտից: Դա ամենազգվար և պատասխանատու աշխատանքն էր: Փայ-

տահատը վոչինչ չէր կորցնի, ածխակիրը՝ նույնպես, բայց խարողը բոլորի համար պատասխանատու լեր:

Ամենավորձված բանվորներն էին խարողներ դառնում: Հեռվից այդ կույտերը նմանվում էին ահագին մըջնանոցների, այն տարբերութեամբ միայն, վոր վերջինները չեն ծխում, իսկ կույտերից գիշեր-ցերեկ թանձր ծուխ եր փլթկում: Վառված կույտը դեռ լերկար պիտի հանգստանար, մինչև ածուխի վերջնականապես հոփանալը: Տխտ պապը քառասուն տարի խարող եր լեղել, իսկ հիմա նրան փոխարինեց իր վորդի Յեզոբը: Այդ հիման վրա ածխափոերի գեղջուկները Պիմկային միանգամից խարողի կկոչեցին:

Հենց առաջին օրը Պիմկան ընտելացավ ածխափոի կյանքի բոլոր կարգերին: Լուսանալուց առաջ վեր էին կենում, նախաճաշում, իսկ հետո գնում էին աշխատանքի մենչև ճաշ: Ծաշից հետո մի քիչ հանգստանում էին և հետո աշխատում էին քանի դեռ լույս եր: Բոլորի աշխատանքն էլ ծանր եր և սովոր մարդիկ էին միայն կարողանում տանել այն: Փայտահատները հյուղ էին վերադառնում հարբածի պես, — այն աստիճանի էին նրանք չարչարում իրենց ձեռներն ու մեջքը: Ածխակիրները տանջվում էին ճանապարհին, մանավանդ սառնամանիքներին, լերը ցուրտը դաղում եր լերեսը: Բայց ամենից վատ ածխափոերի միշտ մուլը հյուղերում ապրելն եր:

Ուտելիքն ել ամենավատն եր, սև հաց, մեկ ել վորևե տաք բան նրա հետ իբրև ավելին, մեծ մասամբ քաշովի: Գեղջուկն ինչ, — եփել-թխելն ինչ:

— Համա կյանք ե հա, փնթփնթում եր զինվոր Ակինտիչը, վոր իր զինվորության ընթացքում խամացել եր ածխափոերի ծանր աշխատանքին... Կթողնեմ ամեն ինչ ու կգնամ, ուր վոր աչքս կտրի: Դլխավոր պատճառն այն ե, վոր բաղնիք չկա... Կարծես ամբողջապես նոր դուրս պըծա խողովակից:

Ածխափոփերի բոլոր մարդիկ լերագում ելին բաղնի-
քի մասին և նախանձում ելին յուրաքանչյուրին, ով
գլուխը եր գնում: Գնաց, նշանակում է բաղնիք ել կերթա:
Գնում ելին հերթով: Իսկ մի ուրիշն ամբողջ ձմեռը լեր-
կու անգամ եր լինում միայն:

Պիմկան ընդամենը մի քանի որ ապրեց ածխափոփում
և նա արդեն սարսափելի ձգտում եր դեպի տուն: Ան-
տառում ապրելը շատ եր դժվար և տղան միանգամայն
համաձայն եր քեռի Ակինտիչի հետ, վոր այստեղից
պետք է հեռանալ, ուր վոր աչքդ կտրի: Պիմկան նույնիսկ
լաց լեղավ բոլորից ծածուկ:

III

Ամենադժվար ժամանակը տոներն ելին: Իհարկե, կա-
քելի լեր «մի որով» Շալալիա գնալ, բայց բոլորն ել
ափսոսում ելին զուր տեղը տանջել ձիերին: Գնալ-գա-
լու համար պետք եր վաթսուն վերստ կտրել, այն ել
անտառային վատ ճանապարհով: Տոն որը բոլորը մի կերպ
ժամանակ ելին մեռցնում: Յերեկը մութ հյուղերում նստելը
զգվելի լեր և բոլորը հավաքվում ելին «փողոցում»: Մեծ
խարուկի են վառում, նստոտում են չորս կողմն ու զվարճա-
խոսում: Այդ զրուցյների առաջին մարդն, իհարկե, Ակին-
տիչն եր, վորին իբրև զինվոր տարել ելին մինչև Մոսկ-
վա: Մնացած բոլորը Բորովսկոյ գործարանից այն կողմը
չելին լեղել: Ակինտիչն ինքն ել եր սիրում զանազան
դեպքեր պատմել:

— Մենակ թե դու սուտ մի ասիր զինվոր, խնդրում
ելին ածխափոփերի գեղջուկները:

— Ինչու պիտի սուտ ասեմ: Դուք վոչինչ չեք տեսել
և ձեզ թվում է, վոր ամեն բան զարմանալի լե: Վերց-
նենք հիմա թեկուզ շոգենավը—ինչ անելի բան է: Նրա
վրա հազար մարդ է գնում և նա իր հետ հո մի բեռնա-
կիր նավ չի քաշում:

Ամբողջ Շալալիան մի անգամից կտանի... Բա չու-
գունկան (լերկաթուղին): Նա ավելի զարմանալի լե,
շվաքնելուն պես թռչում է: Նա լե անթիվ-անհամար
ժողովուրդ է տանում և ամեն տեսակ բեռներ ել: Նստած
ես քեզ համար վոնց վոր խրճիթում և լուսամուկից մալի
ես անում, ելի վոնց վոր խրճիթում: Ձեա կարողանում
հետ նայես, նա արդեն նորից է շվաքնում: — Ուրեմն լե-
կանք: Հիմա լեթե մինչև Բորովսկոյ գործարանը «չու-
գունկա» սարքվի, մի ժամում ածխափոփից հուպ կտալինք
ենտեղ,—իսկ այժմ դուք ածուխով փորսող եք տալիս
վեց ժամ: Բա ճամբին ինչքան եք տանջվում:

— Ախ, զինվոր, սուտ ես ասում:

Դե, լես ձեզ հետ վոնց պիտի խոսեմ, վոր դուք վո-
չինչ չեք հասկանում:

Պիմկային ել եր թվում, վոր զինվորը ստում է, մա-
նավանդ լերը պատմում եր թե ինչպես են ապրում զա-
նազան քաղաքներում: Պիմկային թվում եր, վոր բոլոր
մարդիկ պետք է փաշտ կոտորեն և ածուխ շինեն, բայց
այստեղ հանկարծ քարե տներ, քարե լեկեղեցիներ, շոգենա-
վեր, «չուգունկաներ» և ուրիշ հրաշքներ: Ածխափոփերի
գեղջուկները լերբեմն հանաքի համար սկսում ելին ծաղրել
զինվորին:

— Այ զինվոր, վաչ թե դու լերկնքով ել ես թուր: Քեզ
համար ստելն ինչ արժե վոր:

Ակինտիչը կատաղում եր և սկսում հայհույել: Նա
սարսափելի ծիծաղաշարժ եր բարկանում, բոլորն ել քըր-
քըջում ելին: Կգնամ լես ձեր մոտից և դրանով ել բանը
կվերջանա: Ձանձրացել եմ ձեզ հետ մթության մեջ ապ-
րելուց... կգնամ քաղաք և մի վաճառականի մոտ դռնա-
պան կդառնամ: Ամենահեշտ աշխատանքն է, բախն ավ-
լիր, ցախ բեր, ձիուն թիմարիդ—պրծավ գնաց: Բաղնիք
թեկուզ ամեն որ գնա... վրալիդ հագուստը մաքուր, բա

ուսեցիք—կուգես ենքան կեր, վոր տրաքես. կաղամբա-
պուր են տալիս՝ գդալը տնկվում ե, վոնց վոր մեխը պա-
տին վեր տաս: Իսկ գլխավոր բանը թեյն ե... Ախպեր,
յես ենենց եմ սիրում եդ թեյը, չեմ կարող առել:

— Բա ինչով են եփում եդ թեյը:

— Մի տեսակ... չինական խոտ ե...

— Կարող ե ձավար կամ տավարի միս են գցում հետը:

— Ել ի՞նչ պիտի անեմ յես ձեզ հետ: Վոնց վոր տես-
նում եմ, ժողովուրդը վոչինչ չի հասկանում: Մի խոս-
քով շաքարով են թեյ խմում: Հիմա հասկացա՞ք: Ասենք չե,
ձեր ինչ բանն ե... Հիմա յե՛ր լամպը վերցնենք: Գուք
չեք տեսել, համա առաջին բանն ե: Շալալկայում մատ-
խով ենք նստում, իսկ բարի մարդիկ լամպով: Վոնց ա-
սած, դե ձեր լեզվովը մի տեսակ ասակի աման ե, նրա
մեջ մի տեսակ լուղ են ածում, կերպրին ե կոչվում, պա-
տուլց ե հագցրած, ձեր լեզվով լուսատուլե, լուցկին
տվիր թե չե կրակը պատրաստ ե: Բայց ամենագլխավոր
բանն այն ե, վոր կարելի չե լույս ավելացնել և պակասա-
ցնել, են չե ինչ վոր ճրագվե մոմը... հիմա հասկացա՞ք:

— Մեղք ե եդ բոլորը... ասում եր Տիտ պապը: Վոր
յես եդ քու ասած թեյը խմեմ, շչի ու քաշովի ուտեմ,
չուգունկով գնամ թե շողենալով: Բա եդ ով պիտի աշ-
խատի: Սե աշխատանքից յես փախչեմ, դու փախչես, մեր
հետեից ել Պիմկան պուկ գա և ամբողջ Շալալկան, եհ,
բա ածուխն ո՞վ շինի:

Ձեր ածուխը վոչ վոքի պետք չե, պապի,— ասում եր
զինվորը.— քարածուխ կա: Ուղղակի հողից են հանում:

Եդ ո՞վ ե քեզ համար հողի մեջ դրել են: Այս զին-
վոր, վախ զինվոր... համա սազացնում ես հա՛:

Տիտ պապն այնքան ել չեք սիրում Ակինտիչին թեթե-
ամտության համար, բայց գլխավորապես այն պատճառով,
վոր նա լերես եր առել ծառայության մեջ և շատ եք

սիրում հեշտ կյանքի մասին պատմել: Մարդը բոլորովին
խամացել եր իսկական գեղջուկային աշխատանքից:

Ծերունին հաճախ վիճում եր Ակինտիչի հետ նրա
զինվորի ծխամորձի պատճառով և քանի անգամ դուրս
արավ նրան հյուղից: Շալալկայում վոչ վոք չեք ծխում:
Ածխափուերի գեղջուկներն ողավեցին դրանից և զինվորի
վրա բամբասեցին պապի մոտ:

— Պապի, զինվորն ասում ե, վոր քաղաքում բոլորը
չիբուխ են քաշում—դեռ հալա քիթն ել են ծխախոտ
ձխում:

— Թյու, բոլորը սուտ ե ասում նա... չեք հավատում
պապը:— Ձեն ուզում աշխատել, ահա գլխավոր պատճա-
ռը, բայց չեն իմանում, վոր աշխատանքը պետք ե սիրել:
Ել ինչ մարդ եմ յես, լեթե չաշխատեմ: Ամեն մի արարած
իր գիտեցածի պես ե աշխատում, դրա համար ել հար-
կավոր ե և՛ բուն շինել և՛ իր ձագերին կերակրել:

— Քաղաքներում ել իրենց իմացածի պես են աշխա-
տում, պապի—բացատրում եր զինվորը.— միայն թե այն-
տեղի աշխատանքը ձերից մաքուր ե... Մեզանից քիչ չեն
աշխատում, բայց կարող ե պատահել և ավել: Բոլորն ել
հո ածուխ չպիտի վառեն, հարկավոր ե ամեն արհեստ ել
բանեցնել: Մեկը չիթ ե պատրաստում, մեկը՝ մահուդ,
մեկը՝ կոշիկ, մեկը՝ կողպեք ե շինում:

— Եդ բոլորն ել դատարկ բան ե—ասաց պապը:—
Առաջ ապրում ելին առանց չիթ, իսկ մահուդը կինար-
մատներն ելին գործում տանը: Եդ ամենը դատարկ բան
ե: Գլխավոր վարպետն ելի գեղջուկն ե, վոր հաց ե ցա-
նում: Այ առանց հացի չես ապրի, իսկ մնացած բո-
լորը դատարկ խոսքեր են...

Պիմկան շարունակ մտածում եր այն մասին, թե լույս
աշխարհում ուրիշ մարդիկ վոնց են ապրում: Թեկուզ մի
աչքով կարողանար տեսնել... կարող ե պատահել, վոր
եինվորը չի յել ստում: Ահա նա պատմում ե, վոր տեղեր

կան, ուր ձմեռ չի լինում և վոր իր աչքով տեսել ե ամենամեծ գաղանին—փղին, վոր հասակով մի լավ բաղնիքի չափ կլինի:

Մանկական այդ հետաքրքրութունը լուծվեց մի անսովոր դեպքով:

Մի անգամ ամբողջ ածխափուռը քնած եր մեռածի պես: Սոսկալի սառնամանիք եր և նույնիսկ շներն ել ելին խցկվել հյուղի մեջ: Հանկարծ, գիշերվա կեսին Լիսկոն բարկացած գրմռաց: Նրա գրմռոցը գաղանի վերաբերյալ ջոկ եր, մարդու վերաբերյալ ջոկ,—հիմա մարդու վրա յեր գրմռում:

Շուտով բարձր ձայներ լսվեցին. դրանք յերկաթգծի մի խումբ ճարտարապետներ ելին, վոր նոր ճանապարհի հետազոտութուն ելին կատարում յերկաթուղու նոր գծի համար: Բոլորը առաջ հոգի ելին՝ յերկու ճարտարապետ, նրանց ոգնականները, հասարակ գյուղացիներ և նրանց առաջնորդը: Վերջինը կորցրել եր ճանապարհը և խումբը Շալալկալի փոխարեն դուրս եր բերել ածխափուռ:

Զինվոր Ակինտիչը կոտրավելով դուրս յեկավ և ամենամեծին իր հյուղը հրավիրեց:

—Ձերդ բարձրագնավութուն, խնդրում ենք շնորհ բերեք: Հիմա կրակ կանենք, կաթսայով ջուր կտաքսցնենք: Դուք ել ներեցեք մեզ ձերդ բարձրագնավութուն:

Պիմկան դեռ առաջին անգամն եր տեսնում ոտարյերկրյա մարդկանց և փոքրիկ վայրենու զարմացկոտությամբ դիտում եր նրանց: Նրան զարմացնում եր այն հաճույակատարութունը, վորով Ակինտիչը հոգ եր տանում հյուրերին և ամեն քաջափութում ներողութուն խնդրում:

Բայց և այնպես ամենամեծ աղան բարկանում եր ամեն ինչի վրա և՛ նրա վրա, վոր հյուղում ամեն ինչ մրով ե պատած, և՛ ծխացող ոջախի վրա, և՛ մոլորված առաջնոր-

դողի վրա և՛ նույնիսկ անտառում ճռճացող սառնամանիքի վրա:

—Իսկապես, ձերդ բարձրագնավութուն, դե, եղպես ե, ծուխ ե,—վրա տվեց Ակինտիչը,—և մեկ ել վոր, ոտակալի սառնամանիք ե... Դուք արդեն ներեցեք, վորովհետև անտառում ենք ապրում և վոչինչ չգիտենք ձերդ բարձրագնավութուն:

Դու գինվորներից ես—հարցրեց ամենամեծը:

—Ճիշտ այդպես ե, ձերդ բարձրագնավութուն... Մոսկվայում եմ յեղել... բայց այստեղ, ներեցեք արդեն,—մի խոսքով անտառ ե և վոչ մի հասկացողութուն չկա:

Պիմկան տեսավ, թե պարոններն ինչպես են թեյ խումում և նախաճաշում իրենց ձևով, և ինչպես են գլանակ ծխում: Նա ինքը մինչև անգամ փորձեց թեյը, այսինքն մի քանի անբեկիկներ կերավ և համոզվեց, վոր գինվորը չեր ստում: Քաղցը վոչինչ չկա, իսկ ենպես խոտ ե ելի, միայն թե սե:

Վաղ առավոտյան խումբը առաջ գնաց: Հիմա նրանց առաջնորդեց Ակինտիչը, չիմանալով ինչով դուր գա պարոններին:

—Տեսնում ես, ոձի պես ե վոլորվում, փնթփնթում եր Տիտ պապը, գլուխը պտտեցնելով: Ախ գինվոր, գինվոր, մեզ բոլորիս կծախի:

Բայց ամենամեծն ամբողջ առավոտ փնթփնթում եր. և՛ հյուղում ե ցուրտ, և՛ կաթսայի միջի ջուրն ինչ վոր գարշահոտութուն ունի, և՛ շներն ելին հաջում գիշերը,—ամեն բանից դժգոհ եր:

Պիմկան վանդած եր բերանը բաց և միշտ վախենում եր, չլինի ամենամեծը շրմփացնի իրեն մի բանով: Սակայն ամեն ինչ բարեհաջող անցավ:

Յերբ հյուրերը գնացին, ածխափուռում հանկարծ կարծես թե դատարկութուն տիրեց:

Այնպէս խաղաղ—հանգիստ եր:

Ածխափութերի մարդիկ բոլորը մի տեղ հավաքվեցին և լերկար ժամանակ իրար մեջ գնացողների մասին ելին խոսում:

— Ախ ես բոլորը զինվորի սարքած բաներն են, ա-սում եր Պիմկայի հայրը ծոծրակը քորելով:— Զուգունկա—չուգունկա, ենքան ասեց՝ նա հենց ինքն իր վտաով լե-կավ մեզ մոտ:

Գեղջուկները լերկար ժամանակ խելք-խելքի ելին տալիս՝ լավ կլինի այդ թե վատ, լերք իրենց անտառով սարքի կգցեն չուգունկան:

— Ախր, մեր ինչին ե պետք այդ չուգունկան, — փնթ-փնթում եր Տիտ պապը:— Այդպէս, զվարճության համար մենակ... Ո՛խ, լերեւում ե, մեռնելու ժամանակն ե:

Ուղիղ լերեք տարուց հետո, Շալալկայից քիչ ցած, Զուսովոյի վրայով լերկաթե ժապավենով ձգվեց լերկա-թուղու կամուրջը, իսկ զինվոր Ակինտիչն աչնտեղ պա-հակ դարձավ: Նա հիմա իր համար և՛ պահակատնակ ունի և՛ ինքնայեռ և՛ նոր ծխամորձ:

Ակինտիչը լերջանիկ եր:

Ամբողջ Շալալկան վազեց նայելու, լերք սպասում ելին նոր չուգունկայի առաջին գնացքին: Ծերունի Տիտ պապն ել տմտմբալեն գնաց: Ծերունին այլևս ածխափութում չեր, վորովհետև հիվանդանում եր: Նա լերկար նայեց Ա-կինտիչին, վոր ուռած-փքված ման եր գալիս իր տնակի առաջ, կանաչ դրոշը ձեռքին, և վերջապէս ասաց.

— Եդ իսկը քու տեղն ե, — Ակինտիչ: Աշխատանք չկա, բայց ուժիկ կգուրես:

Պիմկան ամբողջապէս սակվեց, լերք հեռվից լավեց առաջին գնացքի գլրդոցը: Շուտով սարի հետեից դուրս սողաց նա լերկաթե ոձի պէս և լավեց առաջին սուլիչը:

Վոր ընդմիջտ խանգարեց այդ անտառային խլության հանգիստը: Ակինտիչը վորպէս զինվոր ձգվեց լարի պէս և իր դրոշը բարձրացնելով գոչեց առաջին գնացքին:
— Բարի գալուստ:

1898 թ.



—Յերջոմկա, ես որ ապրուստ կլինի, —ասաց ծերունի Բողաչը, ահանջ դնելով ծխնելուղի մեջ վռնացող քամուն: —Հրեն, չեղանակը վոնց ե խառնվել:

Յերջոմկա ելին կոչում շանը, վորովհետև նա մի ժամանակ ապրում եր վորսորդ Յերեմի մոտ: Ինչ ցեղի շուն եր նա, —դժվար ե ասել, չնայած վոր, գլուղական սովորական բակապահ շան նման ել չեր: Վռաքերը չերկայն, լայնաճակատ, դունչը սուր, մեծ աչքերով: Նա Բողաչի ձեռքն եր ընկել դեռևս լակոտ ժանանակ և հետո սովորականից ավելի խելոք դուրս լեկավ:

Բողաչը բարձրահասակ, թեթև կորացած, մեծ գլխով և չերկայն ձեռքերով մի մարդ եր, և ամբողջապես ինչ վոր գորշ: Նա ամբողջ կյանքն ապրեց մեն մենակ: Յերիտասարդ ժամանակ նա գլուղական հովիվ եր, իսկ հետո պահակ դարձավ: Վերջին զբաղմունքն ամենից շատ դուր լեկավ նրան: Ամառ ու ձմեռ նա պահպանում եր այգիներն ու բանջարանոցները: Դրանից ել լավ բան. խրճիթն իրենը, ուր միշտ տաք ե, կուշտ ե, հազնված և դեռ ելի վորեւե ոգուտ եր ձեռքն ընկնում: Բողաչը կարողանում եր նորոգել դուլքեր, կանանց համար լծակներ եր շինում, կողովներ և տրեխներ հյուսում, չերեխաների համար խաղալիքներ եր քանդակում փայտից: Հայտնի չե

թե ի՞նչու մանուկ հասակից նրան Բողաչ ելին անվանում և այդ մականունը մնաց ամբողջ կյանքում:

Ջյունախառն փոթորիկը սաստկացավ: Արդեն մի քանի որ եր, սառնամանիքներն ընկել ելին, բայց չերեկ մեղմացավ և սկսեց փափուկ ձյուն թափվել, վորին վորսորդները, «թերթեփ» են ասում: Դեռ նոր սառող հողը թերթեփվում եր առաջին ձյունով: Դիշերը բարձրացած քամին սկսեց ծածկել առուները, փոսերը, զոգավոր տեղերը:

Նհ, Յերջոմկա, ես որ մենք քեզ հետ ապրուստ կունենանք... Կրկնում եր Բողաչը, նայելով իր պահականոցի փոքրիկ լուսամուտից:

Շունը պառկած եր հատակին, գլուխը դրած չերկու թաթերի մեջ և իրրև պատասխան պոչը շարժում եր: Նա հասկանում եր իր տիրոջ ամեն մի խոսքը:

Արդեն չերեկոյան ժամի ինն եր. քամին մեկ հանգարտում, մեկ ել բարձրանում եր նոր ուժով: Բոկաչն առանց շտապելու սկսեց հազնվել: Այդ տեսակ չեղանակին անդուր բան ե դուրս գալ տաք պահակատնից: Բայց ինչ կարող ես անել, քանի վոր ծառայութունն այդ ե: Նա իրեն մի տեսակ աստիճանավոր եր հաշվում բոլոր զազանները, թռչունների և միջատների նկատմամբ, վորոնք հարձակվում ելին այգիների և բանջարանոցների վրա: Նա կովում եր կաղամբի վորդի, պտղատու ծառերը փչացնող զանազան թրթուրների դեմ. ճնճղուկների, սերմահավաք ագռավների, սարյակների, սնձակեր կեռնեխների, դաշտալին մկների, խլուրդների և նապաստակների դեմ: Հոգն ել, ոգն ել թշնամիներով լիքն ելին, թեև մեծամասնությունը մեռնում եր ձմեռը, կամ թե քնում եր իր բնում ու վորջում: Մի թշնամի չեր մոռում միայն, վորի հետ պիտի կովեր Բողաչը, գլխավորապես հենց ձմեռը: Դրանք նապաստակներն ելին... —վոր նայում ես —տեղն ու տեղը վախկոտութուն ե, եդ նապաստակը, —դատում եր

Բողաչը, շարունակելով հագնվել — բայց ամենամիտաստու-
գադանն է... Եղպես չի, Յերյոմկա: Յեվ խորամանկ է,
վոնց է խորամակ... Բա չեղանակը վոնց է խառնվել, ավ-
լում է, ավլում: Շլիկի համար ամենաառաջին բավակա-
նությունն է...

Նապաստակի մորթուց փափախը գլուխը ճխտելով,
Բողաչը մի լերկար փայտ վերցրեց և թաղիքե վոտնաման-
ների ճակի մեջ խրեց դանակը: պետք կդար: Յերյոմկան
լերկար ձգվեց և հորանջեց: Նա չեւ չեւ ուզում տաք
խրճիթից ցուրտ տեղ գնալ: Պահակատունը գտնվում էր
ահագին պողատու այգու անկյունում: Այգու հետեն ան-
միջապես սկսում էր զառիվայր վայրենջը դեպի գետը, իսկ
գետից այն կողմ կապտին էր տալիս փոքրիկ անտառիկը,
վորտեղ գլխավորապես նապաստակներն են բնակվում:
Ձմեռը նապաստակներն ուտելու բան չունեին, և նրանք
գետի վրայով անց ելին կենում դեպի գլուղը: Նրանց
համար ամենասիրելի տեղը հացի կիտուկներով շրջապատ-
ված կալերն էին: Այստեղ նրանք կերակրվում էին
հավաքելով դեղերից թափված հասկերը, իսկ լերբեմն
մտնում էին կիտուկների մեջ, ուր նրանց համար կատա-
րյալ առատութուն էր, թեև վոչ առանց վտանգի: Բայց
նապաստակներին ամենից շատ դուր էր գալիս պողատու
այգիներում անուշ անել ջահել տնկիներ և խնձորի, շլորի,
բալի մացառներ: Ձե վոր նրանց կեղեն այնքան քնքուշ
և համեղ է, այն չե, ինչ վոր կաղամախու և ուրիշ ծա-
ռերինն է: Մի հաջող հարձակումով նապաստակները լեր-
բեմն ամողջ այգի էլին փչացնում, չնայած բոլոր նախա-
զգուշութուններին: Բողաչն էր միայն կարողանում նրանց
հախիցը գալ, վորովհետև հրաշայի գիտեր նրանց բոլոր սո-
վորութներն ու խորամանկութունները: Ծերունուն շատ
էր ոգնում Յերյոմկան, հեռվից զգալով թշնամուն: Բողաչն
ու Յերյոմկան լերկուսով ամեն ձմեռ շատ նապաստակներ

էլին բռնում: Ծերունին նրանց բռնելու համար վորո-
գայթներ, թակարդներ և զանազան խորամանկ հանգույց-
ներ էր սարքում, իսկ Յերյոմկան ուղղակի տառապ էր
բռնում:

Խրճիթից դուրս գալով, Բողաչը միայն գլուխը պը-
տաեց: Յեղանակը շատ էր արդեն խառնվել և նրա բո-
լոր ծուղակները ծածկել էր ձյունով:

— Յերևում է, վոր սարն ի վար պիտի գնաս... ասաց
Բողաչը իրեն նայող շանը: — Իսկ չես ահա կալերի հետե-
վով կգնամ և նապաստակներին դեպի քեզ կքշեմ: Հաս-
կացար: Եղ ա, հա:

Վորպես պատասխան Յերյոմկան թույլ կաղկանձեց
միայն: Սարի տակ նապաստակներ բռնելն ամենամեծ բա-
վականութունն էր նրա համար: Բանն այսպես լեղավ:
Վորպեսզի կալերն ընկնեն, նապաստակները վազում էին
գետի մյուս կողմից և բարձրանում էլին սարը: Իսկ հայտ-
նի լե, վոր նապաստակը սարն ի վեր հանդարտ է վազում
իսկ սարն ի վար, վտանգի դեպքում, գլուխընձի չե տա-
լիս: Յերյոմկան թաղնվում էր սարի տակ և բռնում էր
նապաստակին հենց այն ժամանակ, լերը նա վոչինչ
չէր տեսնում:

Յերյոմկան պոչը պտտեց և զանգաղ դեպի գլուղը
գնաց, վորպեսզի այնտեղից արդեն սարից ցած իջնի: Խե-
լոք շունը չէր ուզում նապաստակի արտհետն անց կենա:
Նապաստակները շատ լավ էլին հասկանում, թե ինչ են
նշանակում իրենց ճանապարհի վրայի շան հետքերը:

— Այ քեզ չեղանակ, տեսնում ես... — փնթփնթաց Բո-
ղաչը, ձյան վրայով քայլելով դեպի հակառակ կողմը, վոր-
պեսզի թիկանցի կալերը:

Քամին ուղղակի զբոսնում էր, չորս կողմ ցրելով
պտտվող ձյունի ամպերը: Նույն իսկ շնչառութունը կտրը-
վում էր: Ծանապարհին Բողաչը ձյունով ծածկված մի քա-

նի թակարդները և սարքած հանգուցները ալը տվեց։
Ձյուներ ծածկել եր նրա բոլոր խորամանկութիւնները։

— Տեսնում ես, ինչ դուրս չեկավ. փնթփնթում եր
ծերունին, դժվարությամբ դուրս քաշելով վոտքերը ձյու-
նից։— Ես տեսաւ վատ չեղանակին նապաստակներն ել
են իրենց վորջում պատկած... Բայց թե սովը մորաքույր
չի. մի որ պառկի, չերկու որ պառկի, չերորդ որը կգնա
իր համար ուտելիք ճարելու։ Թեև նա նապաստակ ե, բայց
թե փորը հո չի համբերի։

Բողաչը անցավ ճանապարհի կեսը և սաստիկ հոգնեց։
Նույնիսկ քրտնեց։ Յէթե Յերջոմկան չլիներ, վորը նրան
կապասի սարի տակ, ծերունին կվերադառնար իր խրճիթը։
Դե, նապաստակներն ուր պիտի կորչեն։ Ուրիշ անգամ
եւ կարելի չե վորս անել։ Միայն թե Յերջոմկայի առաջ
ամոթ ե. մի անգամ վոր նրան խաբես, մյուս անգամ նա
ինքն եւ չի գնա։ Եուն ե, համա խելոք ու հպարտ շուն
ե... Նա հիմա պառկել ե սարի տակ և նապաստակներին
ե սպասում։

Կալերը դալով, Բողաչն սկսեց նապաստակներին հա-
լածել։ Նա մոտեցավ կալին և փայտով խփեց սյուներին,
ծափ տվեց և մի տեսակ առանձին ֆոնչաց, ինչպես զըր-
տընքում կորած չափից դուրս քշած ձի։

Առաջին չերկու կալերում վոչ վոք չկար, իսկ չեր-
րորդից արագ պեծին տվին չերկու նապաստակի սովեր-
ներ։

— Ըհը, շղթիկները խումբ, չէս սիրում.— հաղթանա-
կում եր ծերունին, շարունակելով իր շուրջկալը։

Բողաչը շրջեց կալերը և սկսեց իջնել սարից դեպի
գետը։ Նրան զարմացնում եր, վոր Յերջոմկան միշտ դուրս
եր վազում իր առաջ, իսկ հիմա մեղավորի պես կանգնած
եր մի տեղում և, հավանորեն իրեն եր սպասում։

— Յերջոմկա, եղ ինչ ես անում։



Եունը թույլ կաղկանձեց։ Նրա առաջ, ձյունին, մեջ-
քի վրա պառկած եր մի փոքրիկ նապաստակ և ուժաս-
պառ թափահարում եր թաթիկները։

— Բռնիր նրան... հուպ տուր... գողաց Բողաչը Յեր-
ջոմկան չեր շարժվում։ Մոտ վազելով, Բողաչը հասկացավ
թե բանն ինչումն ե։ Փոքրիկ նապաստակը պառկած եր
առջևի կոտորած թաթով։ Բողաչը կանգ առավ, փափախը
հանեց և ասաց։

— Այ քեզ բան, Յերյումկա... եդ ինչ տարորինակ քան ես արել, չեղբայրս: Հա, դարմանում եր Բողաչը, հոանալով, վորպեսզի ավելի լավ դիտի անողնական նապաստակին... Յեվ դեռ բոլորովին ջահել ե...

Նապաստակը պառկած եր մեջքի վրա և ըստ լերե-վույթին թողել եր ամեն մի միտք ազատության մասին: Բողաչը շոշափեց կոտրած վոտքը և գլուխը պտտեց:

— Այ քեզ պատահար, Յերյումկա, ինչ պիտի անենք մենք նրա հետ: Մորթենք, թե չե դուր տեղը կտանջվի:

Բայց թե մորթելն ել մի տեսակ մեղք եր: Յեթե Յերյումկան ատամով չբռնեց հաշմանդամին, ամաչեց, աչն դեպքում, իրեն, Բողաչի համար անպաշտպան արարածին սպանելն ամոթ եր ու ամոթ: Ուրիշ բան ե, լեթե նա թա-կարգի մեջ ընկներ, թե չե հիվանդ նապաստակիկ ե, ու-րիշ վոչինչ:

Յերյումկան նայում եր տիրոջը և հարցականորեն կող-կանձում: Իբրև թե, պետք ե մի բան անել...

— Եհե, անա թե ինչ կանենք մենք նրան, Յերյում-կա. տանենք նրան մեզ մոտ խրճիթ... Ուր կերթա նա, եղպես կադ: Առաջին գալը նրան կուտի...

Բողաչը գրկեց նապաստակին և գնաց սարն ի վեր: Յերյումկան գնում ե նրա հետևից, պոչը կախ գցած:

— Այ քեզ վորս... փնթփնթում եր ծերունին... Յեր-յումկալի հետ նապաստակի հիվանդանոց բաց կանենք... Յերբ խրճիթ չեկան, Բողաչը նապաստակին գրեց նստա-րանի վրա և վիրափափեց կոտրած թաթը: Նա հովիվ չե-ղած ժամանակ սովորել եր ալգալիսի վիրակապութուն-ներ անել զառներին: Յերյումկան ուշադրությամբ հե-տևում եր տիրոջ աշխատանքին. մի քանի անգամ մոտեցավ նապաստակին, հոտոտեց նրան ու հեռացավ:

— Իսկ դու նրան մի վախեցնի, բացատրում եր Բո-ղաչը:— Յերբ սովորի, են ժամանակ հոտոտի...

Հիվանդ նապաստակը պառկած եր անշարժ: Նա աչն-

քան սպիտակ և մաքուր եր, միայն ականջի ծալքերը կաթ-ծեա սև ներկով ներկած լինելին:

— Բայց չե վոր հարկավոր ե կերակրել խեղճին... բարձրաձայն մտածում եր Բողաչը:

Բայց նապաստակը համառորեն հրաժարվում եր ու-տելուց և խմելուց:

— Եդ, նա վախից ե,— բացատրում եր Բողաչը:— Եդուց արդեն նրա համար թարմ զաղար ու կաթ կճա-րեմ...

Թախտի տակ անկյունում, դանազան լաթերից Բո-ղաչը նապաստակի համար փափուկ և տաք բուն պատ-րաստեց և տեղափոխեց նրան աչնտեղ:

— Յերյումկա. տես, չվախեցնես նրան — համոզում եր նա շանը, մատով սպառնալով:— Հասկանում ես, հիվանդ ե նա...

Յերյումկան պատասխանի փոխարեն, մոտեցավ նա-պաստակին և լիզեց նրան:

— Ահա, ալգալես, Յերյումկա... նշանակում ե չես նե-ղացնի: Ալգալես ալգալես... Չե վոր դու իմ խելոք շունն ես, միայն թե խոսել չես կարողանում: Առողջ նապաս-տակ շատ կա:

Բողաչը գիշերը վատ քնեց: Նա շարունակ ականջ եր-դնում Յերյումկան թագուն չի մոտենում արդյոք, նա-պաստակին: Թեև խելոք շուն ե բայց և աչնպես շուն ե և նրա վրա հուշս գնել չի կարելի: Մեկ ել տեսար հափ արեց...

«Այ քեզ փորձանք, մտածում եր Բողաչը, մի կողքից մյուսի վրա շուռ գալով:— Կարծում եմ, հերիք ե ինչքան նայել ես նապաստակներին... քանի հարյուր հատ ես կոտո-րել նրանցից, բայց ես մեկը մեղք ե: Բոլորովին հիմար ե անհասկացող...»

Ծերունու սովորությամբ, Բողաչն արթնացավ վաղ առավոտյան, վառարանը վառեց և կրակին գրեց ինչ վոր

ապուրի բըդոշ, քարթու ճաշ, ջրիկ քաշովի: Այսոր աջն-
պես եր ինչպես միշտ: Նապաստակն անշարժ պառկած եր
իր անկյունում, ինչպես մեռած և չեր դիպչում ուտելի-
քին, վորքան ել Բողաչը հյուրասիրում եր նրան:

— Տեսնում ես, ինչ հպարտ աղա չե, հանդիմանում
եր նրան ծերունին:— Դու փորձիր սև ձալարի քաշովուց
ուտել:— Թաթդ կկպչի: Հաստատ, հիմար ե... ինձ մոտ քա-
շովին Յերյումկան աջնպես ե կլանում, ականջների հետևը
ցավում ե:

Բողաչը կարգի բերեց իր խրճիթը, նախաճաշեց և
գնաց դուռը:

— Տես, Յերյումկա,— պատվիրում եր նա շանը:—
Յես շուտ կվերադառնամ, իսկ նապաստակին չվա-
խեցնես:

Քանի դեռ ծերունին ման եր գալիս, Յերյումկան չդի-
պավ նապաստակին, այլ միայն կերավ նրա ամբողջ հյուրա-
սիրութունը:— սև հացի կտորները, քաշովին ու կաթը:
Վորպես շնորհակալութուն նա լիզեց նապաստակի հենց
դունչը և իբրև վարձատրութուն, իր անկյունից բերեց
մի հին կրծած վոսկոր: Յերբ Բողաչը վերադարձավ, նա
միայն գլուխը պտտեց. ինչ խորամանկ նապաստակ ե,—
չերբ հյուրասիրում են, չի չեղ նայում, իսկ չերբ գնացին,
ամբողջովին կերավ:

— Համա խորամանկն ե,— զարմանում եր ծերունին,—
իսկ չես քեզ համար ընծա լեմ բերել, խարդախ շղթիկ...

Նա կռնատակից մի քանի գաղար հանեց, մի դուլդ
կաղամբի կոթ, շաղկամ և ճակնդեղ:

Յերյումկան պառկած եր իր տեղում, կարծես բանից
անտեղյակ, բաց չերբ նա բերանը սրբեց, հիշելով նա-
պաստակի մոտ կերած բաները, Բողաչը հասկացավ նրա
խարդախութունը և սկսեց նրան նախատել:

— Բա դու չես ամաչում, քաթթառ, խաբեբա, հը:
Ինչ ե, քաշովին չե՞ս կերել: Ախ, դու անկուշտ փոր:

Յերբ ծերունին տեսավ նապաստակի առջևն ընկած
վոսկորը, նա չկարողացավ ծիծաղը պահել: Այդպես Յեր-
յումկա, դու չեղ կարողացար հյուրասիրել... բա խարդախ չի:

Նապաստակը դիշերը հանգստացավ և դադարեց վա-
խենալուց: Յերբ Բողաչը գաղարը տվեց, նա ազանությամբ
կերավ այն:— Ըհը, ախպեր, այ, այդպես լավ կլինի... եզ,
լերևում ե, Յերյումկայի գատարի վոսկորը չի... Հերիք ե
նազ ու առզ անել դե, մի շաղկամի համն ել տես...

Շաղկամն ել նույն ախորժակով կերավ:

— Դու խոմ կարգին քաջն ես... դովեց ծերունին:

Յերբ բոլորովին լուսացավ, լավեց դռան թխկոցը, և
մի մանկական բարակ ձայն ասաց.

— Պապի բաց արա... ցրտից մեռա... Բողաչը բացեց
ծանր դուռը և խրճիթ թույեց լոթ տարեկան մի աղջիկ:
Նա հագել եր անագին թաղիքե վոտնամաններ, մոր թիկ-
նազգեստը և վաթաթված եր պատառոտված թաշկինակով:

— Ախ, աչդ դու չես, Կաշուշա: բարև թուշնակա:

— Մայրիկս կաթ ե ուղարկել քեզ... քեզ չե, նապաս-
տակի համար...

— Շնորհակալ եմ գեղեցիկուհի...

Սառնամանիքից կարմրատակած մանկական ձեռքե-
րից նա վերցրեց կաթի փոքրիկ պուլիկը և զգուշությամբ
սեղանի վրա դրեց այն:

Ե, մենք տոնում ենք... իսկ դու, Կաշուշա, տաքացիր:
Սառել ես:

— Ցուրտ ե...

— Հանվիր: Հյուր կլինես... եկել ես նապաստակին
տեսնելու:

— Բա ինչ...

— Միթե չե՞ս տեսել:

— Վոնց չեմ տեսել... միայն թե չես տեսել եմ ա-
մառվա նապաստակներին, չերբ նրանք մոխրադուշն են,
իսկ սա բոլորովին մալիտակ ե քեզ մոտ:



Կսյուշան հանվեց: Նա մի ամենասովորական գյուղական սպիտակագլուխ աղջիկ էր, թուլիս, մազերի բարակ հյուսուով և բարակ ձեռքերով ու վոտքերով, սարաֆան հագած: Վորպեսզի տաքանա, Կսյուշան թռչկոտաց մի վոտի վրա, շնչառությամբ տաքացրեց փայտացած ձեռքերը և հետո միայն մոտեցավ նապաստակին:

— Ախ, ինչքան լավիկն է նապաստակը, պապի... ամբողջապես սպիտակ է, բայց միայն ախտահաները կարծես սևով է շրջանակած:

— Եդ արդեն ձմեռը բոլոր նապաստակներն այդպես սպիտակ են լինում...

— Աղջիկը նստեց նապաստակի կողքին և շոյեց նրա մեջքը:

— Բայց նրա վոտիկը հին շորով կապած է, պապի:

— Թաթիկը կոտրած է, դրա համար ել կապեցի աչն, վորպեսզի բոլոր վոտիկները կպչեն:

— Բա չե՞ր ցավում պապի:

— Իհարկե, ցավում եր:

— Պապի, կառողջանա՞ թաթիկը:

— Կառողջանա, չեթե նա հանգիստ պառկի... նա պառկած է, չի շարժվում: Նշանակում է խելոք է:

— Պապի, նրա անունն ի՞նչ է:

— Նապաստակի անունը: Նապաստակը նապաստակ է ելի — ահա և ամբողջ անունը:

Պապի, եդ ուրիշ նապաստակներն են, վորոնք առողջ են և դաշտում վազվզում են, իսկ սա կաղլիկ է... Հրեն, մեղ մոտ կատվին Մաշկա չեն ասում:

Բողաչը մտքի հետ ընկավ: Իսկապես մի անուն պետք է տալ, թե չե, նապաստակներ շատ կան...

— Ե, Կսյուշա, ի՞նչ անուն տանք նրան, հը:

— Սև Ականջիկ...

— Ճիշտ է, ախ դու խելոքս...

Կաղ նապաստակի վերաբերյալ լուրն արդեն տարածվել էր ամբողջ գյուղը և շուտով Բողաչի խրճիթի մոտ գյուղական հետաքրքրվող չերեխաների ահագին ամբոխ էր հավաքվել:

— Պապի, ցույց տուր նապաստակը, խնդրում եմ չերեխաները: Բողաչը նույնիսկ բարկացավ: Բոլորին մի

անգամից թողնել չի կարելի, խրճիթում չեն տեղավորվել իսկ մեկ-մեկ թողնի, ամբողջ խրճիթը կսառեցնի: Ծերունին պատշգամբ դուրս լեկավ և ասաց.

— Ձեռն կարող նապաստակը ցույց տալ ձեզ, վորովհետև նա հիվանդ է... Յերբ լավանա են ժամանակ կգաք, իսկ հիմա գնացեք տուն:

II

Յերկու շաբաթից հետո Սև Ականջիկը բոլորովին առողջացավ: Յերիտասարդ վոսկորները շուտ են կայուն: Նա արդեն վոչ վոքից չէր վախենում և ուրախ թռչկոտում էր ամբողջ խրճիթում: Հատկապես նա ցանկանում էր ազատվել, և նա ամեն անգամ, դուռը բանալիս պահ էր մտնում:

— Ձե, ախպեր, մենք քեզ չենք թողնի,—ասում էր նրան Բողաչը: Ինչու համար դու սառես ցրտում և քաղցես... Ապրիր մեզ հետ, իսկ գարնանն ազատ գնա քեզ համար: Միայն թե ինձ ու Յերյոմկան չհանդիպես:

Ըստ լերևույթին Յերյոմկան ել նույն բանն էր մտածում: Նա պառկում էր հենց դռան մոտ, և լերբ Սև Ականջիկն ուզում էր իր վրայով թռչել, նա սեղմում էր իր սպիտակ ատամները և գրմում: Ասենք, նապաստակը նրանից բոլորովին չէր վախենում և նույնիսկ խաղում էր նրա հետ: Բողաչը մինչև արտասվելը ծիծաղում էր նրանց վրա: Յերյոմկան ամբողջ հասակով մեկնվում է հատակին, փակում է աչքերը իբրև թե քնած է, իսկ Սև Ականջիկը սկսում է թռչել նրա վրայով: Շուտով Յերյոմկան ել էր տարվում խաղով և սկսում էր նապաստակի հետևից ընկնել խրճիթում, ուխը բանալով և լեզուն դուրս հանելով: Բայց նապաստակը ճարպիկ կերպով խուսափում էր նրանից:

— Ի՜նչ է, ախպեր Յերյոմկա, չե՞ս կարողանում հաս-

նել նրան.—ծիծաղում էր ծերունիը շան վրա:—Քո ինչ բանն է, ալևոր... Զուր տեղը թաթերդ կմաշես:

Գյուղի լերեխաները հաճախակի վազում էին Բողաչի խրճիթը, վորպեսզի խաղան նապաստակի հետ, և նրա համար վորևե բան էին բերում ուտելիքից: Վորը շողկամ է բերում, վորը գազար, վորը ճակնդեղ կամ կարտոֆիլ: Սև Ականջիկն այդ նվերներն ընդունում էր շնորհակալությամբ և հենց տեղն ու տեղը ազահուլությամբ ուտում: Առջևի թաթերով բռնում է գազարը, գլխով ընկնում է նրա վրա, և արագ-արագ կրծում է, կարծես սիրում է: Նա հայտնի չէր վորպես շատակեր, այնպես վոր նույնիսկ Բողաչն էլ էր զարմանում:

— Յեվ վորտեղ է տեղավորում այդ ահագին բանը: Մեծ անասուն չի, բայց ինչքան տաս, կուտի:

Բոլորից հաճախ Կսյուշան էր լինում: Սև Ականջիկը շատ լավ էր ճանաչում նրան, ինքն էր վազում դեպի նա և սիրում էր քնել նրա մոտ, ծնկների վրա: Բայց նա ինքն էլ հենց սև ապերախությունը վարձահատույց չեղավ աղջկանը: Մի անգամ, լերբ Կսյուշան տուն էր գրնում, Սև Ականջիկը կայծակի արագությամբ ցատկեց դեպի դուռը, նրա վրաների մոտ, և անհայտացավ: Յերյոմկան գլխի ընկավ բանն ինչումն է, և ընկավ հետևից: — Վոնց չե, քամի փնտռի գաշտում... Ծիծաղում էր նրա վրա Բողաչը:—Նա քեզանից ավելի խորամանկ կլինի... Իսկ դու Կսյուշա մի լար: Թող նա վազվզի, հետո ինքը կվերադառնա: Ո՛ւր պիտի կորչի:

— Մեր գյուղի շները նրան կպատառոտեն, պապի...

Դու կարծում ես նա գյուղում կորնավ, նա ուղիղ գետի այն կողմը հուպ տվեց, լուրացիներին մոտ: Եսպես ու եսպես, կասի վողջ և առողջ եմ, սեփական բնակարան և ապրուստ ունեմ: Կվազվզի, կխաղա և հետ կգա, լերբ ուտել ուղի: Իսկ Յերյոմկան—դե, հիմար է, ընկել է հետևից, վոր բռնի նրան... Ախ, հիմար շուն:

Այնուամենայնիվ Կոյուշան տուն դնաց արցունքներով, և հենց ինքը, ծերունի Բոգաշն ել քիչ եր հավատում իր ասածին: Ծներն ելի արող են ճանապարհին պատուոտել, և իր մոտ տանն ել ավելի լավ կթվար: Այդ ժամանակ ել Յերյումկան վերադարձավ տուն հոգնած, մեղավոր, պոչը կախ դցած: Ծերունի Բոգաշը նույնիսկ սարսափում եր, չերբ մթնեց: Բայց հանկարծ Սև Ականջիկը չգա... Յերյումկան պառկեց հենց դռան մոտ և ափանջ եր դնում լուրաքանչյուր շրջունի: Նա չեւ եր սպասում: Բոգաշը սովորաբար խոսում եր շան հետ, իսկ այստեղ լռել եր: Նրանք հասկանում ելին իրար առանց բռնելի: Մութն ընկավ: Բոգաշը սովորականից շատ նստեց աշխատանքի: Յերբ նա արդեն ուզում եր պառկել քնելու իր վառարանի վրա, Յերյումկան ուրախ-ուրախ կադկանձեց և թռավ դեպի դուռը:

— Ախ, շրդիկ, վերադարձար հյուր ընկած տեղից... Այդ իսկապես նա եր, Սև Ականջիկը: Ծեմքից նա ուղղակի վրա պրծավ իր ամանին և սկսեց կաթ խմել, հետո կաղամբի կոթ և չերկու գազար կերավ:

— Ինչ ե, ախպեր, հյուր չեղած ժամանակ վա՛ս ես պատվել քեզ — ասում եր Բոգաշը — ժպտալով: — Ախ դու, անամոթ, անամոթ...

Յերյումկան ամբողջ ժամանակ կանգնած եր նապաստակի մոտ և փաղաքշորեն շարժում եր պոչը: Յերբ Սև Ականջիկն ամբողջը կերավ, ինչ վոր կար ամանում, Յերյումկան լիզեց նրա դունչը և սկսեց լու փնտռել:

— Ախ, դուք, չարածճիներ, ծիծաղեց բոգաշը, պառկելով վառարանի վրա: — Յերեում ե վոր առածը ճիշտ ե ասում — միասին նեղ ե, իսկ ջուկ-ջուկ՝ տխուր...

Հետեյալ առավոտյան, ծեղին, Կոյուշան վաղ տալով լեկավ և չերկար ժամանակ համբուրում եր Սև Ականջիկին:

— Ախ դու անախտան վաղկան... նախատում եր նա

նրան: — Մյուս անգամ չփախչես, թե չե շները կպատառտեն: Լսում ես, հիմար: Պապի, ախր նա ամեն ինչ հասկանում ե...

— Եդ եր պակաս, վոր չհասկանար — համաձայնեց Բոգաշը, տեսնում ես վոնց գլխի թե վորտեղ են կերակրում իրեն...

Այդ դեպքից հետո Սև Ականջիկին այլևս չեյին հետևում: Թող գնա խաղաղ վազվզի ձյան վրա: Դրա համար ել նապաստակ ե նա, վորպեսզի վազի: Յերկու ամսից հետո Սև Ականջիկը բոլորովին փոխվեց, մեծացավ, և հաստացավ և բուրդը նրա վրա սկսեց փայլել: Ընդհանրապես նա իր չարածճիլություններով և ուրախ բնավորությամբ շատ բավականություն եր պատճառում, և Բոգաշին թվում եր, վոր ձմեռն ես տարի մի տեսակ շուտ անցավ:

Մի բանն եր միայն վատ: Նապաստակների վորսը Բոգաշին կարգին ոգուտ եր տալիս: Ամեն մի նապաստակի համար նա ստանում եր 25 կոպեկ: Մի ձմեռվա մեջ Բոգաշը հարյուր հատ սպանում եր: Իսկ հիմա այնպես եր դուրս գալիս, վոր կարծես մեղք ե Սև Ականջիկի առաջ վոնչացնել հիմար նապաստակներին: Յերեկոյան Բոգաշն ու Յերյումկան գնում ելին վորսի, ծածուկ, և չերբեք առաջվա նման սպանած նապաստակներին խրճիթ չեյին բերում, այլ պահում ելին նրանց նախասենյակում: Նույնիսկ Յերյումկան ել եր այդ հասկանում, չերբ վորպես վորսի պարզեատրություն նապաստակի վորոտիք եր ստանում, տանում եր այն պահակատեղից հեռու, վորեւ տեղ և ուտում եր կամացուկ:

Մարտ ամիսը լեկավ: Առավոտները կտուրներց սառուցի պտուկներ ելին կախվում փայլուն ծոպավոր ժապավեններով: Յերևացին առաջին ձյունաբաց տեղերը: Ծառերի կոկոններն սկսում ելին տոգել և լցվել: Առաջին սերմահավաք աղաթները լեկան: Չորս կողմն ամեն ինչ

նորոգվում եր և պատրաստվում եր վերահաս ամուսնը, ինչպես տոնի: Մենակ Սև Ականջիկն ուրախ չեր: Նա սկսեց հաճախակի կորչել տանից, նիհարեց, դադարեց խաղալուց, իսկ տուն վերադառնալիս կշտանում եր և ամբողջ ուրը քնում եր բնում, թախտի տակ:

— Եղ, նա խոնարհում ե, դեհ, դրա համար ել տխուր ե,— բացատրում եր Բողաչը:— Հենց այդ պատճառով ել գարնանը նապաստակներին չեն խփում... Նրա միսն ա-վելի նիհար ե, մորթին վոնց վոր ցեցը կերած: Մի խոսքով լեղածը վոչինչ չարժի...

Իսկապես, Սև Ականջիկն սկսեց փոխել ձմեռվա Իր սպիտակ մուշտակիկը ամառվա, մոխրագույնի: Մեջքն արդեն մոխրագույն եր դարձել, ականջները, թաթիկները նույնպես, և միայն փորիկն եր մնացել սպիտակ: Նա սիրում եր դուրս գալ արևի տակ և չերկար ժամանակ տաքանում եր հողակույտի վրա:

Մի անգամ Կսյուշան վազեց լեկավ իր սիրելուն տեսնելու, բայց նա ամբողջ լեռեք ուր տանը չեր:

— Հիմա նրա համար անտառումն ել ե լավ, նրա հա-մար ե գնացել չարաձձին, բացատրեց Բողաչը վշտա-ցած աղջկանը:— Հիմա նապաստակները կոկոն են ու-տում, իսկ ձյունաբաց տեղերում կանաչ խոտիկներ ել կպոկոտի, դրա համար ել հետաքրքիր ե նրան...

Յերջումկան պատույտ եր գալիս Կսյուշայի մոտ և հա-ջում եր նապաստակի դատարկ բնի վրա:

— Այդ նա քեզ ե գանգատվում,— բացատրեց Բողա-չը:— Թեև շուն ե, բայց և ախպես նեղացած ե... Մեզ բո-լորիս նեղացրեց, կորավ:

— Նա չար ե պապի... Ասում եր Կսյուշան արտա-սուքներն աչքերին:

— Ինչո՞ւ չե չար: Ուղղակի նապաստակ ե և ուրիշ վոչինչ: Ամառը ման կգա, քանի կեր կա անտառում,

իսկ ձմեռը, լերը ուտելու բան չի լինի, ինքը հետ կգա... դե կտեսնես: Մի խոսքով, նապաստակը...

Սև Ականջիկը մի անգամ ել լեկավ, բայց պահակա-տանը չմոտեցավ, այլ նստեց կոճղի պես և հեռվից նա-յում եր: Յերջումկան մոտ վազեց նրան, դունչը լիզեց, կոնձկոնձաց, կարծես թե հյուր եր կանչում, բայց Սև Ա-կանջիկը չգնաց: Բողաչը կանչեց նրան, բայց նա մնում եր իր տեղում և չեր շարժվում:

— Ախ, չարաձձի, փնփնթաց ծերունին,— տեսնում ես մի անգամից ե անբարտավանցել շղիկը...

III

Գարունն անցավ: Ամառը լեկավ: Սև Ականջիկը չի լերևում: Բողաչը նույնիսկ բարկացավ նրա վրա:

— Զե վոր կարող եր մի ընդունիլ դալ մի կերպ... Թվում ե, շատ զործ չկա և ժամանակ կհարվի: Ամառն ել անցավ: Աշունը լեկավ. ցրտերն ընկան: Առաջին, փե-տուրի պես փափուկ ձյունը թափվեց:


Սև Ականջիկը չեր լերևում:

— Կգա Շղիկը... Մի թարում եր Բողաչը Յերջոմ-կային:— Այ սպասիր, հենց ամեն ինչ ձյունը ծածկի, ու-տելու բան չի լինի, եհ կգա, ելի: Ծիշտոն եմ ասում քեզ...

Բայց առաջին ձյունն ել լեկավ, իսկ Սև Ականջիկը չեր լերևում: Բողաչը նույնիսկ տխրեց:

Մի անգամ առավոտյան Բողաչն ինչ վոր բան եր շինում իր խրճիթի մոտ, լերը հանկարծ հեռու աղմուկ լավեց և հետո կրակոցներ: Յերջումկան ականջները սրեց և խզալի կաղկանձեց:

— Տեր իմ, չե վոր այդ վորսորդները գնացին նապաս-տակներ խփելու— առաց Բողաչը, ականջ դնելով գետի մյուս ափից լավող կրակոցներին:— Եղ ե, վոր կա... Տեսնում ես վոնց են կրակում... Ոխ, կսպանեն նրանք Սև Ականջիկին, անպայման կսպանեն...



Ծերունին, ինչպս վոր կար, առանց փափախ, վազեց դեպի գետակը: Յերջմկան առջևից եր թռչում:

— Ո՛չ, կսպանեն, կրկնում եր ծերունին, շունչը կտրելով գնալու ժամանակ:— Ելի չեն կրակում..

Սարի վրայից ամեն ինչ չերեում եր: Անտառային մաշառուաների մոտ, վորտեղ գտնվում ելին նապաստակները,

վորոշ տարածության վրա կանգնած ելին վորսորդները, իսկ անտառից վորսը քշում ելին նրանց դեմ վորսահալածները: Ահա ճոճուացին փայտե ճոճուակները, սոսկալի աղմուկ-աղաղակ բարձրացավ և մացառների միջից չերեվացին վախեցած, վռազկոտ նապաստակները: Ծոճուացին հրացանի կրակոցները, և Բողաչը գոռաց վոշ իր ձայնով.

— Այ մարդիկ, սպասեցեք, սպասեցեք: Կսպանեք իմ նապաստակին... Ո՛չ:

Մինչև վորսորդների մոտ դեռ հեռու չեր, և նրանք վոչինչ չելին կարող լսել, բայց Բողաչը շարունակում եր գոռալ և ձեռքով անել: Յերբ նա մոտեցավ, վորսահալածն արդեն վերջացել եր: Մոտ տաս հատ նապաստակ եր սպանվել:

— Այ մարդիկ, ինչ եք անում դուք, — գոռում եր Բողաչը վորսորդների մոտ վազելով:

— Վճնց ինչ: Ձեռ տեսնո՞ւմ նապաստակ ենք խփում:—

— Սխր անտառում իմ սեփական նապաստակն ե ասլրում:

— Վճնց թե քո նապաստակը:

— Այո, աչգպես... իմ նապաստակը և ուրիշ վոչինչ: Առջևի ձախ վոտը կոտրած ե... Սև Ականջիկը:

Բողաչը գննեց սպանված բոլոր նապաստակներին, բայց նրանց մեջ Սև Ականջիկը չկար: Բոլորն ել առողջ թաթիկներով ելին:

Վորսորդները ծիծաղեցին ծերունու վրա և առաջ գնացին անտառի քոլաբերանով, վորպեսզի հետևյալ վորսահալածն սկսեն: Բողաչի վրա վորսահալածներն ել ծիծաղեցին, մատղաշ տղերքն ել, վոր գլուղից ելին հավաքվել, ծիծաղեց և վորսորդ Տերենտին, նույնպես ծանոթ գեղջուկ:

— Մեր Բողաչի դատողութունը պղտորվել ե մի քիչ, — հանաքեց Տերենտին: — Եգպես ամեն մեկն ել կրկսի փնտռել անտառում իր նապաստակին...

Բողաչի նապաստակ վորսալու ժամանակը չեկել եր, բայց նա շարունակ հետաձգում եր: Հանկարծ Սև Ականջիկն

ընկնի թակարդի մեջ: Նա փորձեց լերեկոնները դուրս գալ կալերը, ուր կերակրվում էին Նապաստակները, և նրան թվում էր, թե իր մոտից վազող ամեն մի նապաստակ—Սև Ականջիկն է:

«Ձե վոր Յերյումկան հոտից կճանաչի նրան, դրա համար ել շուն ե... Պետք ե փորձել»...

Ասելն ու անելը մեկ չեղավ: Մի անգամ, չերբ չեղանակը խառնվեց, Բողաչը Յերյումկայի հետ վորսի գընաց: Շունը սարի տակով ինչ վոր դժկամակությամբ եր գնում և մի քանի անգամ նայեց տիրոջը:

— Գնա, գնա, պետք չի ծուլանալ... փնթփնթաց Բողաչը:

Նա շրջեց կալերը և քչեց նապաստակներին: Մի անգամից տաս հատ դուրս թռան:

«Ե՛, Յերյումկայի համար ապրուստ կլինի» մտածեց ծերունին:

Բաց նրան զարմազացրեց շան վռնոցը: Այդ Յերյումկան եր սարի տակ նստած:

Սկզբում Բողաչը կարծեց, թե շունը կատաղել ե և միայն հետո հասկացավ բանն ինչու՞ն ե: Յերյումկան չեր կարողանում նապաստակներին իրարից տարբերել .. Յուրաքանչյուր նապաստակը նրան Սև Ականջիկ եր թվում: Սկզբում ծերունին բարկացավ հիմար շան վրա, իսկ հետո ասաց.

— Ախր դրուստ վոր, Յերյումկան իդուր չե, վոր հիմար շուն ե... չերևում ե նապաստակներին խեղդելու վերջն ե: Բավական ե...

Բողաչը գնաց պաղատու ալգու տիրոջ մոտ և հրաժարվեց իր ծառայութունից:

— Ել չեմ կարող... կարճ բացատրեց նա:

1904 թ.

Ամառվա անձրևային օր ե: Յես սիրում եմ այդպիսի չեղանակին թափառել անտառում մանավանդ, չերբ առաջիդ մի տաք անկյուն կա, ուր կարելի չե չորանալ և տաքանալ: Մեկ ել, վոր ամառվա անձրևը տաք ե լինում: Այդպիսի չեղանակին քաղաքում ցեխ ե, իսկ անտառում հողն աղահոսթյամբ ե ներս ծծում խոնավութունը, և դուք գնում եք անցյալ տարվա թափած տերևի և սոճիի ու չեղենու շաղ անցած փշերի հաղիվ խոնավացած գորգի վրայով: Ծառերը ծածկված են անձրևի կաթիլներով, վորոնք յուրաքանչյուր շարժումից թափվում են ձեզ վրա: Բաց հենց վոր արևը գլուխը հանի, այդ տեսակ անձրևից հետո անտառն այնպես պայծառ կանաչին ե տալիս և ամբողջությամբ ալրվում ե աղամանդի կայծերով: Ձեր չորս կողմում ինչ վոր տոնական ե և ցնծալի, և դուք այդ տոնին զգում եք ձեզ վորպես ցանկալի, թանկագին հյուր:

Իսկ և իսկ մի այդպիսի անձրևային օր չես մոռենում ելի Սվետլոյե լճին, ձկնորսական սայմայի*) ծանոթ պահակ Տարասին: Անձրևն արդեն նոսրանում եր: Յերկինքը մի կողմից սկսեց պարզել: Մի քիչ ել, և ահա կերևա ամառվա թեժ արևը: Անտառն չին կճանճը սուր պտույտ կատարեց և չես դուրս չեկա լալն լեզվի պես լիճը մտած զառիվալո հրվանդանի վրա: Ծիշտն ասած, այստեղ իսկական լիճը չեր, այլ չերկու լճերի միջի լալն ջրանցքը,

*) Ուրալում ձկնորսական կայաններին սայմա չեն ասում:

և սալման կուշ եր չեկել ցածր ափի պտուտակում, ուր ծոցիկում պատասպարվում էլին ձկնորսական մակույկները:

Լճերի միջի ջրանցքը դույացել եր սալմալի դիմաց կանաչ գլխարկի պես ընկած անտառատ կղզու շնորհիվ:

Հրվանդանի վրա իմ չերեալն առաջ բերեց Տարասի շան պահակային կանչը, — անծանոթ մարդկանց վրա նա միշտ մի առանձին ձևով եր հաշում՝ կաց ու կամ և սուր, կարծես թե հարցնում եր բարկացկոտ «Ո՞վ ե գալիս»:

Յես սիրում եմ այդպիսի հասարակ շնիկներին, նրանց արտասովոր խելքի և հավատարիմ ծառայության համար...


Ձկնորսական խրճիթը հատակը դեպի վեր շրջած մեծ նավակի պես եր թվում, — դա կուզը դուրս պրծած հին փայտե կտուրն է, վոր ծածկված է գվարթ, կանաչ խոտով: Խրճիթի չորս կողմը բարձրանում եր չբատերե ապուղանի, չեղեսպակի, արջաշվիկների խիտ դեռաբույսը, այնպես վոր խրճիթին մոտեցող մարդու գլուխն եր չերևում միայն: Այդպիսի խիտ խոտ լճի ափերին եր բուսնում միայն, վորովհետև այնտեղ բավականաչափ խոնավութուն կար և հողն ել պարարտ եր:

Յերբ արդեն չես բոլորովին մոտեցա խրճիթին, խոտի միջից գլխիսնձի տալով իմ դեմ դուրս պրծավ մի խալտաբղետ շնիկ և լցվեց կատաղի հաշոցով:

— Սորելի, դադարիր... Չճանաչե՞լիր: Սորելին կանգ առավ տարակուսած, բայց ըստ չերեույթին, դեռ չեր հավատում հին ծանոթությանը: Նա դգուշությամբ մոտեցավ, հոտոտեց իմ վորսորդական կոշիկները և այդ ծխակա-աարությունից հետո միայն, մեղավորի պես պտտեցնում եր պոչը: Իբրեւ թե, ներողութուն, սխալվեցի, բայց և այնպես չես պետք է պահպանեմ խրճիթը:

Խրճիթը դատարկ եր, տերը չկար, այսինքն նա, հավանորեն, լճի վրա չեր գնացել ձկնորսական վորևե պիտույք նայելու համար: Խրճիթի չորս կողմն ամբողջապես

խոսում եր կենդանի մարդու ներկայության մասին. թույլ ծխացող կրակը, հենց նոր կոտորած փայտի մի խալտ, ցցերի վրա չորացող ուռկանը, ծառի գլղոնի մեջ տնկած կացինը: Սալմալի կիսաբաց դռնից չերևում եր Տարասի ամբողջ տնտեսութունը. պատի վրալի հրացանը, մի քանի կճուճ վառարանի գողին, արկղիկը թախտի տակ, կախ տված ձկնորսական պիտույքներ: Խրճիթը բավական ընդարձակ եր, վորովհետև ձմեռը, ձկնորսության ժամանակ նրա մեջ բանվորների մի ամբողջ արտել եր տեղավորվում: Ամառը ծերունին մենակ եր ապրում: Բոլոր չեղանակներին, նա ամեն ուր տաք վառում եր ուռսական վառարանը և քնում եր տախտակամածի վրա:



Տարության հետ ունեցած այդ սերը բացատրվում եր Տարասի պատկառելի հասակով: Նա մոտ իննսուներեկան եր: Յես ասում եմ «մոտ», վորովհետև Տարասն ինքըն ել եր մոռացել թե չերբ է ծնվել: «Դեռ ֆրանցուզից առաջ», ինչպես բացատրում եր նա. այսինքն ֆրանսիացիների 1812 թվին Ռուսաստան արշավելուց առաջ:

Հանելով թրջված կուրտկաս և վորսորդական սպառազինութունը պատից կախելով, չես սկսեցի կրակ անել:

Սոբորիկոն պտուղատ էր գալիս ինձ մոտ, վորեն ողուտ զգալով: Կրակն ուրախ բոցավառվում էր՝ դեպի վեր թողնելով ծխի կապուղտ հոսանք: Անձրեն արդեն դադարեց: Յերկնքի վրայով սլանում ելին պատառոտված ամպերը, յերբեմն-յերբեմն կաթիլներ շաղ տալով: Տեղ-տեղ կապուղտին ելին տալիս յերկնքի բաց տեղերը: Իսկ հետո յերեվաց և արևը, թեժ հուլիսյան արևը, վորի ճառագայթների տակ թաց խոտը կարծես ծխում էր: Լճի ջուրը կանգնած էր խաղաղ—հանգիստ, ինչպես լինում է այդ միայն անձրեկից հետո: Թարմ խոտի, յեղեսպակի, մոտիկ գտնված սոճու մացառների խեփի բուրմունք էր գալիս: Ընդհանրապես լավ է, ինչպես վոր կարող է լավ լինել անտառային այգալիսի խուլ անկյունում: Դեպի աջ, ուր վերջանում է ջրանցքը, կապուղտին էր տալիս Սվետլոյե լճի վողորկութունը, իսկ ատամնավոր յեղրադարձի հետևը, բարձրանում ելին լեռները:

Սքանչելի անկյուն: Զուր չե, վոր ծերունի Տարասն ամբողջ քառասուն տարի ապրել է այստեղ: Վորեն տեղ, քաղաքում նա դրա կեսն էլ չէր ապրի, վորովհետև քաղաքում վոչ մի փողով այգալիսի մաքուր ող չես գնի, իսկ գլխավորը—այդ հանգստութունը, վոր տարածված է այստեղ: Լավ է Սայմայում... Ուրախ վառվում է փայլուն կրակը, սկսում է աչրել թեժ արևը, աչքերդ ցավում են հրաշալի լճի փայլիլող հեռավորութունը տեսնելիս: Այդպես կնստելի այստեղ և թվում է, վոր չեղի բաժանվի անտառային սքանչելի անդորրութունից:

Սպասելով ծերունու գալուն, յես յերկար փայտի վրա ամբացրի արշավանքի պղնձե թեյամանը ջրով և կախարի կրակի վրա: Զուրն արդեն սկսում էր յեռալ, բաց ծերունին գեռ չկար:

— Նա ուր կարող է գնալ. — բարձրաձայն մտածում էլի յես: Վորսորդական պիտույքներն առավոտն են նա-

յում, իսկ հիմա կեսոր է... Գուցե գնացել է տեսնի թե մեկն ու մեկը ձուկ չի բռնում առանց հարցնելու... Սոբորիկո, ուր է գնացել տերդ:

Սեյլը շունը բրդոտ պոչն էր շարժում միայն և անհամբերութամբ կաղկանձում էր: Արտաքինով Սոբորիկոն պատկանում էր այսպես կոչված «արդյունաբերող» շների տիպին: Փոքրահասակ, սուր դնչով, ցից ականջներով և դեպի վեր ծռած պոչով: Նա հիշեցնում էր սովորական բալկապահ շանը, այն տարբերությամբ, վոր բալկապահ շունն անտառում սկսուռ չէր գտնի, չէր կարող «հաջելով» դուրս հանել խլահավին, յեղջերվի հետքը գտնել, մի խոսքով իսկական արդյունաբերող շուն, մարդու ամենալավ բարեկամը: Այդ տեսակ շանը հարկավոր է հենց անտառում տեսնել, վորպեսզի լրիվ չափով գնահատել նրա բոլոր արժանիքները:

Յերբ մարդու այդ, «լավ բարեկամը» ուրախ մեղմատաց, յես հասկացա, վորնա նկատել է տիրոջը:

Իսկապես, ջրանցքում, սև կետի նման յերևաց ձկնորսական մակուկը, վոր շրջում էր կղզին: Դա հենց ինքը Տարասն էր: Նա լողում էր, վոտքերի վրա կանգնած, և ճարպիկորեն աշխատում էր մի թխակով, — բոլոր իսկական ձկնորսներն այդպես են լողում իրենց մի կտորից շինած մակուկներում, վորոնք անհիմն չե, վոր «հոգեսպան» են կոչվում: Յերբ նա ավելի մոտ լողաց, յես զարմացած նկատեցի մակուկի առաջ լողացող կարապին:

— Տուն գնա, զբոսասեր, փնթիսթում էր ծերունին, քշելով գեղեցիկ լողացող թռչունին: — Դնա, գնա... Ահա յես քեզ լողալ ցույց կտամ, ով գիտե ուր... Տուն գնա, զբոսասեր:

Կարապը գեղեցիկ նաղանքով մոտ լողաց սայմային, ափ դուրս յեկավ, թափահարեց իրեն և իր ծուռտիկ, սև վոտքերի վրա լնդլնդալով, ուղևորվեց դեպի խրճիթը:

69
59

Ծերունի Տարասը բարձրահասակ, փառահեղ մորուքով և խիստ, մեծ ու մոխրագույն աչքերով մի մարդ էր։ Նա ամբողջ ամառը ման էր գալիս բոբիկ և սուանց գլխարկի։ Զարմանալի չէ, վոր նրա բոլոր ատամներն ատողջ և գլխի մազերը պահպանվել էին։ Արևակեզ լայն ճակատըն ակոսված էր խորը կնճիռներով։ Շոգ ժամանակ նա ման էր գալիս գլուղացու կապույտ կտավից դործած մի շապիկով։

— Բարև Տարաս։

— Բարև, աղա.

— Վճրտեղից ես գալիս.

— Ահա վորդեգրիս հետեից ելի գնացել, կարապի... Շարունակ եստեղ, ջրանցքում եր պտտվում, բայց հետո, հանկարծ կորավ։— Ե՛հ, իսկույն գնացի հետեիցը։ Դուրս չեկա լիճը — չկա, գետախորշ նավեցի — չկա, իսկ նա կըղզու հետևն է լողում.

— Վորտեղից ես ձեռք բերել աչգ կարապը։

— Այստեղ վորսորդներ չեկան, գե՛հ, կարապին իր եզի հետ սպանեցին, իսկ սա մնաց։ Մտել է չեղեգնի մեջ ու նստել։ Թռչել չի կարողանում, թափվել է չերեխի պես։ Յես, իհարկե, ցանցը դրել ելի չեղեգների գլմաց, ևք ըռնեցի նրան։ Մենակ կկորչի, բազենները կքրքրեն, նրա համար, վոր կարգին հասկացողութուն չունի։ Վորք է մնացել։ Դե, չես ել բերել եմ նրան ու պահում։ Նա չել է սովորել։ Հիմա շուտով մի ամիս կլինի, վոր միասին ենք ապրում։ Առավոտը ծեգին վեր է կենում, լողում է ջրանցքում, կերակրվում է, հետո գալիս է տուն։ Գիտի, թե չերք եմ վեր կենում չես, և սպասում է, վոր կերակրեն։ Մի խոսքով, խելոք թռչուն է, և իր կարգը գիտի։

Ծերունին արտակարգ սիրալիր էր խոսում, վորպես մոտիկ մարդու մասին։ Կարապը քաշե քաշ ուղիղ խրճիթի մոտ չեկավ և, ը ստ չերևութին, վորեւ պատառ եր սպասում։

— Կթռչի, կկորչի նա քո մոտից, պապի, նկատեցի չես։

— Ինչո՞ւ պիտի թռչի։ Եստեղ լավ է, ինքը կուշտ, չորս կողմը ջուր...

— Հապա ձմեռը։

— Զմեռն անց կկացնի ինձ հետ միասին, խրճիթում։ Տեղը հերիք է, իսկ մենք Սոբոլկույի հետ ավելի ուրախ կլինենք։ Վոնց չեղավ, մի վորսորդ ընկավ ինձ մոտ, սալմա, տեսավ կարապին և աղպես ել ասում էր «կթռչի չեթե թևերը չխուզես»։ Բայց ինչպես կարելի է խեղել, թռչունին։ Թող ապրի, ինչպես բնությունը պատվիրել է նրան... Մարդուն ջոկ բան է պատվիրած, թռչունին՝ ջոկ... Խեղք չի կտրում, ինչո՞ւ պարոնները կարապին սպանեցին։ Ախր, չեն ել ուտի, հենց ենպես, անզգամութուն են անում...

Կարապը կարծես հասկանում էր ծերունու խոսքերը և նախում էր նրան իր խելոք աչքերով։

— Իսկ նա Սոբոլկույի հետ ինչպես է—հարցրեցի չես։

— Սկզբում վախենում էր, իսկ հետո սովորեց։ Հիմա կարապն ուրիշ անդամ Սոբոլկույի պատառն է խլում։ Շունը մրմռում է նրա վրա, իսկ կարապը նրան թևով է տալիս։ Ծիծաղելի չէ նրանց վշտ հեռվից նայել։ Պատահում է, վոր միասին գնում են զբոսնելու, կարապը ջրի վրա, իսկ Սոբոլկուն—ափին։ Շունը փորձեց լողալ նրա հետևից, բայց վճրտեղ, իր արհեստը չեր. քիչ մնաց խեղդվել։ Բայց չերք կարապը հեռանում է, Սոբոլկուն փնտրում է նրան։ Նստում է ափին ու վրոնում... Իբրև թե ախրում եմ չես—շունս, առանց քեզ, արտակից բարեկամ։ Ահա եղպես ել ապրում ենք չերեքով։

Յես շատ եմ սիրում ծերունուն: Նա արդեն շատ լավ եր պատմում, շատ բան գիտեր: Այդպիսի լավ, խելոք ծերունիներ լինում են: Ամառային շատ գիշերներ եմ անցկացրել սալմայում, և լուրաքանչյուր անգամ վորևե նոր բան իմացել:

Տարան առաջ վորսորդ եր, և չորս կողմի տեղերը հիսուն կիլոմետրի վրա գիտեր. անտառային թռչունի և գազանի ամեն մի սովորությունը գիտեր: Բայց հիմա հեռու գնալ չեր կարող և իր ձուկն եր ճանաչում միայն: Մակուկի վրա լողալն ավելի հեշտ ե, քան հրացանով անտառում ման դալը, մանավանդ սարերում: Հիմա հրացանը մնացել եր Տարասի մոտ վորպես հին հիշողություն միայն, մեկ ել ամեն տեսակ պատահարի համար, լեթե գալը գար: Ձմեռները գալերն աչցելում ելին սալմա և վաղուց արդեն ատամներ ելին սրում Սորոկոյի վրա: Միայն Սորոկոն խորամանկ եր և գալերի ճանկը չեր ընկնում:

Յես մնացի սալմայում մի ամբողջ ուր Յերեկոյան գնացինք կարթով ձուկ բռնելու և ուռկաններ դրինք գիշերվա համար: Լալն ե Սվետլոյե լիճը, և իզուր չե վոր նա Սվետլոյե—հատակ և կոչվում.—նրա ջուրը բոլորովին թափանցիկ ե, ախպես, վոր լողում ես մակուկի վրա և տեսնում ես ամբողջ հատակը մի քանի մետր խորություն: Տեսնում ես և խաղաղատ քարերը, և գետակի դեղին ավազը և ջրային բույսերը: Յերևում ե, թե ինչպես ման ե գալիս ձուկը, «վտառով»—աչսինքն հոտով: Լեռնային աղպիսի հարյուրավոր լճեր կան Ուրալում, և նրանք բոլորն ել աչքի լեն ընկնում արտասովոր գեղեցկությամբ: Ուրիշներից Սվետլոյե լիճը տարբերվում ե նրանով, վոր մի կողմով եր միայն սարերին կպած, իսկ մյուսով դուրս եր գալիս «տափաստան», ուր սկսվում եր որհնած Բաշկիրյան: Սվետլոյե լճի չորս կողմն ընկած եր

ամենափարթամ տեղերը, իսկ նրա միջից դուրս եր գալիս լեռնային մի կայտառ գետ, վոր տարածվում եր տափաստանով ամբողջ հազար կիլոմետր: Լճի լերկարությունը մինչև քսան կիլոմետր եր, իսկ լայնությունը մոտ տասը կիլոմետր: Մի քանի տեղերում խորությունը լերեսուն մետրի լեր հասնում: Նրան մի առանձին գեղեցկություն եր տալիս անտառախիտ կղզիների խումբը: Այդպիսի մի փոքրիկ կղզի հեռացել եր լճի ուղիղ մեջտեղը և կոչվում եր Գոլոգնի (քաղցած), վորովհետև վատ լեղանակին նրա վրա ընկնելով, շատ եր պատահում, վոր ձկնորսները քաղցած ելին մնում մի քանի օրով:

Արդեն քառասուն տարի լեր, ինչ Տարասն ապրում եր Սվետլոյե լճի մոտ: Մի ժամանակ նա ունեցել ե և իր ընտանիքը, և տունը, բայց հիմա նա ապրում եր մեն-մենակ: Յերեկոյանները մեռան, կինն ել մեռավ, և Տարասն սուսաց դուրս գալու մնաց Սվետլոյե վրա ամբողջ տարիներով:

— Ձես ախրում, պապի—հարցրեցի լես, լերը մենք վերադառնում ելինք ձուկ բռնելուց.—սարսափելի լե մենակ, անտառում...

— Մի՞թե լես մենակ եմ ապրում: Բան ասացիր... Ամեն ինչ ունեմ... Յեվ ամեն տեսակ թռչուն, և՛ ձուկ, և՛ խոտ: Իհարկե, նրանք խոսել չգիտեն, բայց լես ամեն բան հասկանում եմ: Ուրիշ անգամ սիրտս ուրախանում ե նրանց նայելիս... Ամեն մեկն իր կարգն ունի ու իր խելքը: Դու կարծում ես ձուկը զուր ե լողում ջրի մեջ, կամ թռչունը թռչում անտառում: Ձե, նրանք մեզնից պակաս աշխատանք չունեն... Հրեն, մտիկ տուր,—կարապըն սպասում ե մեզ Սորոկոյի հետ: Ա՛ խորամանկ...

Ծերունին սաստիկ գոհ եր իր վորդեգրից և բոլոր խոսակցությունները վերջ ի վերջո նրա վրա ելին հանգում:



—Հպարտ թռչուն ե,—բացատրում եր նա: Փորձիր հրապուրել նրան կերակրով և մի առեր,—ուրիշ անգամ ել մոտ չի գա: Նա չեղ իր բնավորութունն ունի, ինչ անենք, վոր թռչուն ե... Սորոկոյի հետ ել շատ հպարտ ե պահում իրեն: Մի բան լինի թե չե,—խսկուչն

թևով, կարող ե և քթով ծակել: Պատահում ե ուրիշ անգամ շունն ե ուզում չարճծիութուն անել, ատամներով ե սպառնում, պոչն ե ուզում բռնել, իսկ կարապը—առ հա նրա դնչին... եդ ել հեշտ չե, վոր պոչից բռնի:

Յես գիշերեցի և հետևյալ որն առավոտյան պատրաստվում ելի հեռանալ:

—Աշնանն արի,—ասաց ծերունին: Են ժամանակ մարխի լուսով և կարթատեգով ձուկ կբռնենք: Դեհ, աքարներ ել կխփենք: Աշնան աքարը գեր ե լինում:

—Հավ պապի մի կերպ կգամ:

Յերբ լես հեռանում ելի, ծերունին ինձ հետ դարձրեց:

—Մտիկ տուր, հապա թե կարապը վոնց ե խաղում Սորոկոյի հետ...



Իսկապես, արժեր հիանալ այդ պատկերով: Կարապը կանգնած եր, թևերը բաց արած, իսկ Սորոկոն փղատոցով և հաջոցով հարձակվում եր նրա վրա: Խելոք թռչունը վիզը ձգում և ֆշշացնում եր շան վրա, ինչպես սագերն են անում այդ:

Ծերունի Տարսաը լերեխալի նման սրտանց ծիծաղում եր այդ տեսարանի վրա:

Հետեւյալ անգամ լիս Սվետլոյե լճի մոտ ընկա արդեն ուշ աշնանը, յերբ առաջին ձյունը լեկավ: Անտառը հիմա լի լավ եր: Յեղեկներն ու սոճիներն ավելի կանաչ ելին թվում, քան թե ամառը: Աշնան չոր խոտը ձյան տակից դուրս եր ցցվել դեղին խոզանակի պես: Գերեզմանային լուսթյուն եր տիրում չորս կողմը, կարծես ամառվա լեռուն աշխատանքից հոգնած բնությունն հիմա հանգստանում եր: Սվետլոյե լիճը մեծ եր թվում, վորովհետև առափնյա կանաչը չկար: Թափանցիկ ջուրը մթափնել եր և աշնանային ծանր ալիքը աղմուկով ծեծում եր ափը:

Տարասի խրճիթը կանգնած եր միկնուլն տեղում և ավելի բարձր եր լերևում, վորովհետև նրան շրջապատող բարձր խոտը չկար:

Իմ դեմ դուրս լեկավ նույն Սոբոլյոն: Այժմ նա ինձ ճանաչեց և դեռ հեռվից փաղաքշորեն պատում եր պոչը:

Տարասը տանն եր:

Նա ուռկան եր նորոգում ձմեռվա բռնումի համար:

— Բարև, ծերուկ:

— Բարև, աղա:

— Ե, վիճեց ես ապրում:

— Դե, վոչինչ... Աշնանը, առաջին ձյան հետ քիչ տկարացա: Վտտներս ելին ցավում... Յեղանակը խառնրվելիս լիս միշտ ալդպես եմ լինում:

Ծերունին, իրոք վոր, ընկճված տեսք ուներ: Նա աֆնքան դառամ և խղճալի լեր թվում: Դա, ինչպես լերևաց, ամենևին հիվանդությունից չեր առաջ լեկել: Թեյի ընթացքում մենք խոսեցինք և ծերունին պատմեց իր վիշտը:—



— Հիշում ես, աղա, կարապին:

— Վորդեգրին:

— Նա ինքն է... Ախ, լավ թոչուն եր:

Բայց ահա մենք Սորոկոյի հետ մնացինք մենակ...

Այո, վորդեգիրը չկա:

— Վորդեգրներն սպանեցին:

— Ձե, ինքը գնաց... Ենքան վիրավորական է ինձ համար այդ... Են ել ում, լես չելի միթե—խնամք տանում նրան: Իմ ձեռքով ելի կերակրում... Նա ինձ մոտ կանչելիս ել եր գալիս: Լճի վրա լողալիս լես նրան կանչում ելի թե չե, գալիս եր: Սովորած թոչուն եր: Ախր, բոլորովին սովորել եր... Հա:—Աչնան առաջին ցրտերին փորձանք պատահեց: Չվելիս կարապետների լերամի իջավ Սվետլոյե լճի վրա. եհ, հանգստանում են, կերակրվում են, լողում են, իսկ լես ուրախանում եմ: Թող թոչունը ուժ հավաքի. մոտիկ տեղ չի թոչելու: Եհ, հենց ետեղ ել փորձանք պատահեց: Իմ վորդեգիրն սկզբում հեռու լեր պահում իրեն մյուս կարապետներից. լողում եր նրանց մոտ և ելի հետ գալիս: Նրանք իրեց ձենով կղկղացնում են, կանչում են սրան, իսկ սա տուն է գալիս... Իրեք թե լես ինձ համար տուն ունեմ: Յերեք որ եր նրանք աղապես ելին: Բոլորն ել իրար հետ խոսում են իրենց, թոչունի լեզվով: Եհ, հետո տեսնում եմ իմ վորդեգիրը տխրեց... Մեկ է, վոնց վոր մարդն է տխրում: Դուրս է գալիս ափը, կանգնում մի վատի վրա և սկսում է դուռալ: Ախր, են ել վոնց է խղճալի գոռում... Ինձ ել է վշտացնում, իսկ հիմար Սորոկոն վոռնում է գալի ախ: Պարզ է, աղատ թոչուն է, արջունն է խոսում...

Ծերունին լոեց և ծանր հառաչեց:

— Եհ, հետո ինչ, պապի:

— Ախ, ել մի հարցնի... փակեցի լես նրան խրճիթում մի ամբողջ որ, աղապես նա ալստեղ ել նվաց: Կանգնում է մի վոտի վրա հենց դռան մոտ և մնում է կազ-

գնած, մինչև չքչես նրան տեղից: Միայն թե մարդկային լեզվով չի ասում. «պապի, թող գնամ ընկերներեք իս մոտ: Նրանք տաք լերկիր կթոչեն, ձմեռն ինչ պիտի անեմ լես ալստեղ ձեզ հետ»:—Մտածում եմ, ալ քեզ խնդիր: Թողնեմ—կթոչի լերամի հետեից և կկորչի...

— Ի՞նչու կկորչի:

— Բա ինչպես: Նրանք աղատուլթյան մեջ են մեծացել: Նրանց ջանքերին հաջրն ու մայրն են թոչել սովորեցրել: Ախ, դու կարծում ես նրանք վոնց են անում: Յերե կարապետները քիչ մեծանում են—հաջրն ու մայրը առաջուց ջրի վրա լես դուրս բերում նրանց: Հետո նոր սկսում են թոչել սովորեցնել: Կամաց-կամաց են սովորեցնում, շարունակ առաջ, հա առաջ: Իմ աչքով եմ տեսել թե ինչպես են ջանքերին չվելու սովորեցնում: Առաջ կենտ-կենտ են սովորեցնում, հետո փոքրիկ լերամիներով, իսկ վերջում արդեն մի ավելի մեծ լերամ են կազմում: Եհ, իսկ իմ վորդեգիրը մեն-մենակ մեծացավ և վոչ մի տեղ չեր թոչում: Լողում եր լճի վրա,—եղ եր նրա ամբողջ արհեստը: Նա վորտեղից կարող է թոչել: Ուժասպառ կլինի, լերամից հետ կընկնի և կկորչի: Հեռու թոչելու սովոր չի Ծերունին կրկին լոեց:

— Բայց ստիպված ելի բաց թողնել,—թախիծով ասաց նա:—Մեկ է մտածում եմ լես, լեթե ձմեռը հետ գցեմ, կտխրի և կսատկի: Եղալես առանձին թոչուն է արդեն: Յեմ բաց թողի: Վորդեգիրս գնաց լերամի մոտ, մի որ լողաց նրաց հետ, իսկ լերեկոյան նորից տուն չեկավ: Աղապես լերկու որ եր լողում եր: Դե, թեկուզ թոչուն է, բայց իր տանից բաժանվելն ել դժվար է: Նա եղ մնաս բարևի համար եր լողում... Վերջին անգամ ափից կլինեք քառասուն քալ հեռու լողաց, կանգ առավ, և տխրեք ջան, վոնց է գոռում իր լեզվով:—Իրեք թե՛ շնորհակալ եմ աղ ու հացի համար: Են տեսնելն եր ինչ տեսա նրան: Մենք

Սոբորկուլի հետ նորից մենակ մնացինք: Սկզբներում մենք
 լերկուսով ել շատ ելինք տխրում: Հարցնում եմ նրան.
 «Սոբորկա, բա ուր ե մեր վորդեգիրը»... Իսկ Սոբորկոն
 իսկուհն սկսում ե վռնալ... նշանաւում ե, ամսոսում ե: Յեւ
 իսկուհն ամիս ե վազում, և իսկուհն ման ե գալիս սիրելի
 բարեկամին... Գիշերներն ինձ թվում եր, վոր վորդե-
 գիրն այստեղ ահա չփչիացնում ե ամի մոտ և թեմիկ-
 ներն ե թափահարում: Դուրս եմ գալիս, վոչ վոք չկա...

Ահա թե ինչ բան դուրս չեկավ:

1910 թ.



Ց Ա Ն Կ

	Ել
1. Վորսորդ Յեմելյան	9
2. Ստուգյոնայի ձմեռանոցը	23
3. Խուլ տեղում	48
4. Բողաչն ու Յերյոմկան	70
5. Վորդեգիր	91



ԳԻՆԸ 1 ՌՈՒԲ.

Д. Н. МАМИН-СИБИРЯК
ИЗБРАННЫЕ РАССКАЗЫ
ГИЗ ССРЭ ЭРИВАНЬ

ՀՀ Ազգային գրադարան



NL0395209

3962

